

697

Պրոֆեսորների բոլոր լեզուներով, միացիկ:

Handwritten mark



L. Մ. ԿԱԳԱՆՈՎԻԶ


ՄՏԿՆԵՐԻ

Յ Ե Վ

ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՔԱՂԲԱԺԻՆՆԵՐԻ
ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

338.1

4-12



ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1933

17 FEB 2010

Պոլիսարձեր բոլոր յերկրներ, մրացե՛ք:

338.1
4-12 սե

L. Մ. ԿԱԳԱՆՈՎԻԶ

**ՄՏԿՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՔԱՂԲԱԺԻՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ
ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

1010
42703

697
~~11055~~

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1933

16 MAY 2013

29838

ՀԱՅԿՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

1. Լ. Մ. ԿԵԳԵՆՆԻՆՆԻ — ՄՏԿ-ՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԵՂԲԵԺԻՆՆԵՐԻ ՆՊԵՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ.
2. ՆՈՐ ՊԵՅՄԱՆՆԵՐ — ԳՅՈՒՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐ ՄԵԹՈԴՆԵՐ («ՊՐԵՎ-ԳԵՅ-Ի» 1933 ԹՎԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի ԱՌԱՋՆՈՐԴՈՂԸ).
3. ՄԵԲԵՆԱՏՐԱԿՏՈՐԱՆԻ ԿԱՅԸՆՆԵՐԻ ԲԱՂԲԵժԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ԿՈՒՏՆՏԵՍԱԿԸՆ ԲՋԻՋԻ ՅԵՎ ԲԱՂԲԵժԻՆՆԵՐԻ ՈՒ ՇՐՋԱԾՄՆԵՐԻ ՓՈԽ-ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ. ՀԱՄԿ (Բ) Կ ԿԿ-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ.



4233-91

ՄՏԿ-ՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՎՈՒՄՆԵՐԻ
ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ընկերներ: «ՄՏԿ-ների և խորհրդատեսությունների քաղաքաժինների նպատակի ու խնդիրների մասին» ձեզ բաժանված վորոշման նախագծից դուք տեսնում եք, վոր այդ հարցը դուրս է գալիս սովորական գործնական հարցերի շրջանակներից: Դա կազմակերպական մեծ հարց է՝ կազմակերպական հարցերի լենինյան և ստալինյան լայն ըմբռնումով:

Հիշենք, թե ինչպես եր ընկ. Ստալինը դնում կազմակերպական վերահսկողության հարցը հնգամյակի սկզբում, վերահսկողության շրջանի սկզբում, այդ շրջանի խնդիրները առնչությամբ:

Համկ (բ) Կ Կենտրոնական Կոմիտեյի 1929 թվի ապրիլյան պլանումում ընկ. Ստալինը սոցիալիզմի պատվանդանի վրա ժողովրդական տնտեսությունը վերահսկողության յենթարկելու խնդիրները կապեց այն քաղաքական լոզունգների հետ, վոր տվել եր կուսակցությունը մեր յերկրում կատարված դասակարգային նոր տեղաշարժերի կապակցությամբ, այն է՝ ինքնաքննադատություն ծավալելու, բյուրոկրատիզմի դեմ պայքարը սրելու, խորհրդային ապարատը զտելու, նոր տնտեսական կադրեր և կարմիր մասնագետներ պատրաստելու, կորստեսային և խորհրդատեսային շարժումն ու կուլակի դեմ հարձակումն ուժեղացնելու, ինքնարժեքն իջեցնելու, պրոֆմիութենական աշխատանքի պրակտիկան արմատապես բարելավելու, կուսակցությունը զտելու և այլ լոզունգների հետ:

Նա ասաց.

«Այս վերահսկողումն անցկացնելու համար հարկավոր է ամենից առաջ լավացնել և ամրացնել սոցիալիստական շինարարության կադրերը, ինչպես տնտեսական-խորհրդային ու պրոֆմիութենական, այնպես էլ կուսակցական-կոոպերատիվ կադրերը, հարկավոր է սրել մեր բոլոր կազմակերպությունները, մաքրել նրանց ազտից, հարկավոր է բարձրացնել բանվոր դասակարգի և գյուղացիության միլիոնավոր մասսաների ակտիվությունը»:

Կուսակցության XVII համագումարում, 1930 թվի հունիսին, դնելով այն հարցը, թե ինչո՞ւմ է բայրիկիյան հարձակման ելությունը մեր ներկա պայմաններում, ընկ Ստալինը պատասխանեց.

«Բայլընիկյան հարձակման ելությունը նախ և առաջ այն է, վոր մորթիլիզացիայի յենթարկի մեր մասսաների դասակարգային զգոնությունն ու հեղափոխական ակտիվությունն ընդդեմ մեր յերկրի կապիտալիստական տարրերի, մորթիլիզացիայի յենթարկի մասսաների ստեղծագործական նախաձեռնությունն ու ինքնագործունեությունն ընդդեմ մեր հիմնարկությունների և կազմակերպությունների բյուրոկրատիզմի, վորը թագցնում է մեր կազմերի ընդերքում յեղած հսկայական սեղերվները և արգելակում նրա սոցիալգործումը...»

Յերկրորդ, բայլընիկյան հարձակման ելությունն այն է, վոր կազմակերպվի պրոֆմիութենական, կոոպերատիվ, խորհրդային և ամեն տեսակ այլ մասսայական կազմակերպությունների վողջ գործնական աշխատանքի վերակառուցումը՝ համաձայն վերակառուցման շրջանի պահանջների...»

Բայլընիկյան հարձակման ելությունը, վերջապես, այն է, վոր մորթիլիզացիայի յենթարկի ինքը՝ կուսակցությունը հարձակման ամբողջ գործը կազմակերպելու համար, ամբապնդվեն և սրվեն կուսակցական կազմակերպությունները...»

Ինչպես տեսնում եք, ընկ. Ստալինը կազմակերպական վերակառուցման հարցերը կապում է կուսակցության քաղաքական լուղունգների հետ, մասսաների դասակարգային աշարջությունն ու հեղափոխական ակտիվությունը մորթիլիզացիայի յենթարկելու խնդիրների, իրեն՝ կուսակցությանը մորթիլիզացիայի յենթարկելու խնդիրների հետ: Կապիտալիզմի դեմ, թշնամի դասակարգերի դեմ սոցիալիզմի ծավալուն հարձակման վողջ վերակառուցողական շրջանում կուսակցությունը որ որի վրա վերադասավորում է իր կազմակերպությունները:

Մեր հաղթանակները, վորոնց մասին մենք խոսեցինք այստեղ ԿԿ-ի պլենումում առաջին հարցի առթիվ, վորոնց մասին այնքան վառ կերպով խոսեց այստեղ ընկ. Ստալինը, ձեռք են բերված ճիշտ գծի հետևանքով, այդ գլխավոր գծի իրագործման համար ամենուրյա պայքար մղելու հետևանքով: Նրանք ձեռք են բերված պրոլետարական դիկտատուրայի բոլոր լծակների վերակառուցման հիման վրա, թերությունների ուղղման համար պայքարելու հետևանքով:

Մեր կազմակերպությունների վերակառուցման խնդիրն ամբողջապես իր ուժի մեջ է մտնում այսօր ևս, հատկապես գյուղի նկատմամբ, վորովհետև հրապարակից չի հանված վոչ հետագա սոցիալիստական վերակառուցման խնդիրը, վոչ էլ հետագա բայլընիկյան հարձակման խնդիրը, ընդդեմ կապիտալիստական տարրերի, ընդդեմ դասակարգային թշնամու, վորը մեր կողմից տակավին չի վսչնչացված ու թեև ցրիվ է տրված, տեղահան արված, բայց իր ուժերի մնացորդներով տակավին փորձում է դիմադրել սոցիալիզմի հաջող առաջխաղացմանը:

Յեղ պատահական չէ, վոր ընկ. Ստալինը, առաջին հնգամյակի սկզբում դնելով պրոլետարական դիկտատուրայի բոլոր լծակների վերակառուցման հարցը, այժմ, յերկրորդ հնգամյակին անցնելու ժամանակ, ամբողջ սրությամբ առաջադրելով կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամբացման լուղունգները, դնում է ՄՏԿ-ների ու խորհունտեսությունների քաղաքիչներ ստեղծելու հարցը, վորպես կուսակցության գյուղի աշխատանքի հերթական խնդիրներին վերաբերող մի հարց, վորպես մի հարց, վոր բղխում է, մեկ կողմից, մեր ուժերի աճումից, իսկ մյուս կողմից՝ մեր գործնական թուլություններից, կազմակերպական աշխատանքի թերություններից:

ՄԵՐ ՆՎԱՃՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՅԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԲՆԱԳՎԱՌՈՒՄ

Չեմ ուզում այստեղ մանրամասնորեն կանգ առնել գյուղատնտեսության բնագավառում մեր ձեռք բերած նվաճումների ընդհանուր հանրագումարային թվերի վրա, այդ մասին բավականաչափ ասվեց արդեն: Հանձինս կոլտնտեսությունների և խորհունտեսությունների մենք գյուղում ստեղծել ենք սոցիալիզմի ամուր տնտեսական պատվանդան: Մենք ունենք սոցիալիստական կոլտնտեսություններում և խորհունտեսություններում արտադրական-տեխնիկական պատվանդանի վիթխարի ընդարձակում: Դա ուղղակի հիմք է գյուղատնտեսության հետագա վերելքի, մեր ինդուստրիայի համար հումքի և աշխատավորության կենցաղի հետագա բարելավման համար գյուղատնտեսական մթերքների արտադրության առավել մեծ ծավալման: Մենք այժմ ունենք բոլոր հնարավորությունները, վորպեսզի մեր գյուղն արագորեն բարգավաճի, այդ թվում նաև այն յերկրներում և այն մարզերում, վորտեղ այժմ մի շարք շրջաններում խոշորագույն թերություններ են հայտարարված գործնական աշխատանքներում:

Այժմ արդեն շատ կան լավ աշխատող կոլտնտեսությունների և խորհունտեսությունների հիանալի տիպարներ և որինակներ, վորոնք ավելորդ անգամ հաստատում են մեր կոլտնտեսությունների ու խորհունտեսությունների վիթխարի հնարավորություններն ու հեռանկարները և աշխատանքի վորակի անմիջական կախումը դեկավարների վորակից:

Ահա, որինակի համար, Հյուսիսային Կովկասի Կամենակ շրջանի Չերնեցովո գյուղի «Առաջին հեծյալ գնդի» անվան կոլտնտեսությունը: Այս կոլտնտեսությունն որինակելի ձևով է կազմակերպել իր տնտեսությունը: 700 աշխատունակ կոլտնտեսականներից միայն 7 հոգի 25-ից պակաս աշխոր ունեն (այն էլ պատանիներ և դպրոցականներ են):

Մեկ աշխատունակ կոլտնտեսականին ընկնում է միջին հաշվով 167 աշխոր—յերկու անգամ ավելի, քան նրա կողքին գտնվող «Կովինտերն» վատ կոլտնտեսությունում:

Կոլտնտեսուծյունն աշնանացան ե կատարել պլանից 204 հեկտարով ավելի ե անցյալ տարվանից 634 հեկտարով ավելի, աշնանավար՝ անցյալ տարվանից 970 հեկտարով ավելի:

Կոլտնտեսուծյունն ունի 6 տարրեր պարանքային-անասնապահական ֆերմաներ, այդ թվում ձիաբուծական ֆերմա, վորն ունի 273 ցեղային դամրիկ: Ընդամենը կա 2187 գլուխ անասուն, յուրաքանչյուր կոլտնտեսական ընտանիքի 7-ական գլուխ, վորպիսին այդ շրջանի չքավորներն ու սակավազոր միջակները (վորոնցից գերազանցապես բազմաթիվ ե տվյալ կոլտնտեսուծյունը) առաջ յերբեք չեն ունեցել:

Կոլտնտեսուծյունը զանազան ծառայուծյուններ ե մատուցել կոլտնտեսականներին—բացել ե կոշիկների վերանորոգման արհեստանոց, խողարուծական ֆերմայից կայուն գներով խոճկորներ ե բաժանել (այդ խոճկորներն աճեցված են նորմայից դուրս), մուր ե կաղ-մակերպել, կոլտնտեսուծյան ձիերը տրամադրել ե տնամերձ բանջարանոցները վարելու ե շուկա գնալու համար ե այլն: Յեթե հաշվելու լինենք այդ ծառայուծյունների արժեքը, ապա նրանք կազմում են յուրաքանչյուր կոլտնտեսական ընտանիքի 200—250 ուրբլի հաստատուն գներով՝ աշխորային վարձատրուծյունից դուրս:

Այդ արդյունքները կոլտնտեսուծյունը ձեռք ե բերել մասնավորապես նրանով, վոր գարնան սկզբին աշխատանքի դուրս չգալու համար ընկերական դատի յե յենթարկել 87 կոլտնտեսականի ե տուգանել ե յուրաքանչյուրին 5-ից մինչև 10 ուրբլի, անմիջապես գանձելով այդ գումարը, ինչպես նաև կատեգորիկ կերպով արգելել ե աշխատանքի դուրս չեկողներին շուկա գնալու համար սայլեր տալը: Գողուծյան համար դատի յե յենթարկել 33 հոգու (վորից 17-ն իրենց կոլտնտեսականներից, 16-ը հարևան մենատնտեսներից):

Շատ կարևոր ե այն հարցը, թե ինչ են տվել կոլտնտեսուծյունները կոլտնտեսականներին: Կարևոր ե, առաջին, նրա համար, վոր մենք կոլտնտեսուծյուններ ենք ստեղծում աշխատավորների կյանքը բարելավելու նպատակով, յերկրորդ, վոր մեզ մոտ կան տակավին մարդիկ ե մարդուկներ, վորոնք հաճուծյամբ վերցնում ե ուղցնում են բոլոր դժվարուծյունները, բոլոր միևնույնը, վորը կուսակցուծյունը յերբեք չի քողարկել, այլ, ընդհակառակը, բացահայտել ե ու բացահայտում ե. նրանք այդ վերցնում ե ուղցնում են, վոր վարկաբեկեն կոլտնտեսուծյունների իրեան ե վիժեցնեն կուսակցուծյան քաղաքականուծյունը:

Մենք այժմ ունենք արդեն հազարավոր կոլտնտեսուծյուններ, վորոնք վոչ միայն լավ են կազմակերպել իրենց տնտեսուծյունը, այլև արդեն իսկ տալիս են հիանալի արդյունքներ կոլտնտեսականների կյանքը բարելավելու իմաստով: Կրեբեմ միքանի որինակ:

Ահա թե ինչ ե պատմում «Սոց. դեմոկրատի» թերթի բրեգազը Կենտր. սեահող մարդի նովոսկոլսկի շրջանի «Հաղթանակի արշալույս»

Կոլտնտեսուծյան մասին: Նա կազմվել ե 1929 թվին, նախկին իշխան Յուսուպովի հողերի վրա, ուր հեղափոխուծյունից հետո գաղթեցին հարևան կալվածատիրական Սլոնովկա գյուղի գյուղացիները:

Ցարական Սլոնովկայում հողը 20—25 վերստ հեռու յեր, ընդ-վորում միքանի սաժենի հասնող կտորներով ցվրված 15—17 տեղ: «Հաղթանակի արշալույս» արտելում ամեն ինչ ձեռքի տակ ե գտնվում: Ցան շեմքից դուրս անասունների բակերն են, ջրաղացը, դաշտը, դեղերը, ձակնդեղի շեղջերը, սիլոսը:

Յուսուպովի հողերի նախկին վարձակալների բերած արտադրուծյան գործիքներն են յեղել՝ 25 արոր, 20 փայտե փոցիս, 10 ձիաքարը գուծան: Այժմ կոլտնտեսուծյան հողերին սպասարկում ե նովոսկոլսկի մեքենատրակտորային կայանը, վորն ունի 57 տրակտոր: Մեքենատրակտորային կայանի ոգնուծյամբ բերքահավաքի բոլոր աշխատանքները կոլտնտեսուծյունում 1932 թվին մեքենայացվեցին ե վերջացվեցին 15 որում:

«Հաղթանակի արշալույս» կոլտնտեսուծյան բերքը 1930—1932 թվականներին, 3 տարում, հետևյալն ե յեղել՝ վարսակ՝ 1 հեկտարից 15 ցենտներ, ցորեն՝ հեկտարից 13 ցենտներ, գարի՝ 13 ե կես ցենտներ:

Մենատնտես հատվածի միջին բերքը նովոսկոլսկի շրջանում նույն տարում յեղել ե. վարսակ՝ 7 ցենտներ, աշնանացան ցորեն՝ 3 ցենտներ: Ահա, ընկերներ, այնտեղ՝ 14 ե 13, այստեղ 7 ե 3:

Քառադաշտի փոխարեն կոլտնտեսուծյունը մտցրել ե յոթդաշտային ցանքսափոխուծյուն: Մաքուր ցելի 50 տոկոսը պարարտացվում ե աղբով: Առաջին անգամ գործադրում են սուպերֆոսֆատ: 1930 թվին ցորենը սուպերֆոսֆատով պարարտացված ցելից տվեց հեկտարին 30 ցենտներ բերք: Ցանվում ե առվույտ, մտցվում ե զբաղված ցել, սիլոսային կուլտուրաներ: Վատորակ սերմացուն վտարված ե կոլտնտեսուծյունների սահմաններից:

Կոլտնտեսուծյունը լրիվ կատարել ե հացամթերման պլանը, իսկ մսի արտադրանքի հանձնման պլանը կոլտնտեսուծյունը կատարել ե դեռ նախքան հոկտեմբերի 1-ը: Վողջ ապագա ցանքսատարածուծյան համար լրիվ հավաքված ե սերմացուի ֆոնդը: Ստեղծված ե ապահովագրական ֆոնդ: Ամբողջ տարվա համար կազմված են հանրայնացված անասունների անհրաժեշտ կերի ե ֆուրաժի ֆոնդերը:

Արտելն ունի ընդամենը 78.880 ուրբլի յեկամուտ: Մեկ տնտեսուծյան ընդհանուր յեկամուտը կազմում ե միջին հաշվով 2040 ուրբլի:

Մեկ աշխորին ընկնում ե՝
1 կիլոգրամ 595 գրամ վարսակ, 700 գրամ ցորեն, 335 գրամ գարի, 532 գրամ կորեկ, 3 կիլոգրամ կարտոֆիլ, 1 կիլոգրամ բանջարանոցային մթերք ե ձմերուկ, 46 գրամ մեղր, 30 գրամ միս, 50 գրամ

արևածաղկի յուղ, 5 գրամ բուրդ, 3 կիրպրամ բազուկ, 7 կիրպրամ սիրու-
Փողով 1 աշխորին ընկնում է 1 ու. 36 կ.: Մեկ ընտանիքին տա-
րեկան միջին հաշվով 728 ուրբի:

«Հաղթանակի արշալույս» կոլտնտեսությունում 2—3 անգրագետ-
կա: Բուրբ յերիտաօարդները, մինչև 18 տարեկան բոլոր յերեխաները
գլխովին դպրոց են ընդգրկված: Անցյալ տարի 1-ին աստիճանի դըպ-
րոցից բացի բացվեց նաև կոլյերիտ դպրոց: Այնտեղ սովորում են 30
պատանիներ. 40 տանը յերկու դպրոց: Բայց կոլտնտեսականներին
այդ քիչ է: Ուստի 20-ից ավելի մեծահասակներ սովորում են Մլոնով-
կայի կոլյերիտ դպրոցում, վորտեղ նրանց համար կոլտնտեսություն-
միջոցներով հատուկ հանրակացարան է կառուցված: Չկա վոչ մի տուն,
վոր թերթերի կամ ժուրնալի բաժանորդ չլինի: Միջին հաշվով յուրա-
քանչյուր տան ընկնում է 2,5 հրատարակություն: 75 թերթ և 64
ժուրնալ է ստանում «Հաղթանակի արշալույս» կոլտնտեսությունը:

«Հաղթանակի արշալույս» կոլտնտեսությունում կան մշտական
մսուրներ, կա մանկապարտեզ: Յերեխաները գլխովին պիտանքական
կազմակերպություն մեջ են գտնվում: Դպրոցում կա ռադիո, կինո,
գրադարան:

«Հաղթանակի արշալույս» արտելն իր ծավալով, հողային և այլ
պայմաններով Կենտրոնական սեահողային մարզի հյուսիսային մասի
սովորական տիպիկ տնտեսություն է հանդիսանում: Նրա հաղթանակ-
ներն արդյունք են ակտիվի հմուտ ղեկավարություն, համերաշխ աշ-
խատանքի, կուսակցական կազմակերպության կենդանի նախաձեռ-
նություն, յեռուն կյանքի: «Սոցիալիստիկեակոյե զեմլեդելի» թերթի
բրիգադն առանձնապես ընդգծում է կոլտնտեսության կազմակերպչի՝
հին պարտիզան և հեղափոխական Յեվդոկիմ Ստեպանովիչ Գարկու-
շևի խոշոր ծառայությունները: Ամուր ղեկավար, մասսովիկ, հիանալի
գիտի գյուղատնտեսությունը, խոշոր տարածություն վրա անուն-
ազգանունով գիտի վոչ միայն յուրաքանչյուր առանձին գյուղացու,
այլև նրա յերեխաներին ու մերձավորներին:

Վոչ միայն հազարավոր և տասնյակ հազարավոր կոլտնտեսու-
թյուններում, այլև բովանդակ ԽՍՀՄ-ում գլխավորեն բարձրացել է
կոլտնտեսական գյուղացիություն կուլտուրական մակարդակը: Յեթե
1920 թվին մենք ունեյինք ընդամենը գրագետների 32 տոկոս, ապա
1930 թվին գրագետները 67 տոկոս, իսկ 1932 թվին արդեն 90 տո-
կոս են կազմում: Առավել ևս ապշեցուցիչ են առանձին ազգային հան-
րապետություններին վերաբերող որինակները: Այսպես, որինակ, կալ-
միկիայում գրագետությունը 1920 թվին 2,3 տոկոս էր կազմում, 1932
թվին՝ 90 տոկոս: Բելոռուսիայում 1913 թվին 24 տոկոս, 1932 թվին՝
90 տոկոս: Հենց միայն 1931 — 32 թվին գյուղի անգրագիտություն
վերացման գործընթացում սովորում էյին մոտ 3 միլիոն չափահաս
գյուղացի, ԽՍՀՄ-ի անգրագիտություն վերացման վոչ չ ցանցում սո-
վորող 3,8 միլիոն չափահասների ընդհանուր թվին:

Աճել է կոլտնտեսականներին սպասարկող կուլտուրական և կեն-
ցաղային հիմնարկների ցանցը: 1929 թվին կար 20 հազար խրճիթ-
ընթերցարան, կարմիր անկյուն և կոլտնտեսական ակումբ, իսկ 1932
թվին՝ 40 հազար, 10 հազար էլ գյուղացու տներ և սոցիալիստական
կուլտուրայի շրջանային տներ:

1929 թվին գյուղում տպագիր և ապակետիպ թերթերը միավոր-
ներով էյին հաշվվում: 1932 թվին 2000 շրջանային տպագիր թերթերից
բացի կա 200 տպագիր թերթ ՄՏԿ-ներում, 104 տպագիր և մոտ 3000
ապակետիպ թերթեր խորհրտնտեսություններում, ՄՏԿ-ներում ու տն-
միջապես կոլտնտեսություններում, ինչպես նաև մոտ 200 հազար պա-
տի թերթ կոլտնտեսություններում և նրանց բրիգադներում:

Միայն ՌՄՖՆՀ-ում 1930 թվին գյուղում մանկամսուրներում
ընդգրկված էր 511 հազար յերեխա, իսկ 1932 թվին՝ 3 ու կես միլիոն
յերեխա: Միայն 1932 թվին գյուղական մսուրի աշխատողների կար-
ճատե դասընթացներով անց են կացել 108 հազար հոգի: Տասնյակ
և հարյուր հազարավոր կոլտնտեսականներ սովորել են տրակտորիստ-
ների, կոմբայներների, բրիգադիերների, դաշտաժարների, ազրոտեխնիկ-
ների, խրճիթվարների, հաշվետարների, անասնապահների և այլ դաս-
ընթացներում: Տասնյակ հազարավոր կոլտնտեսականներ առաջ են
քաշվել աշխատելու խորհուրդների, սպառկոոպերացիայի, զանազան
տնտեսական և այլ մարմինների ապարատներում: Հարյուր հազարա-
վոր կոլտնտեսականներ սովորում են տեխնիկումներում ու բանֆակ-
ներում, տասնյակ հազարավորներ՝ բուհներում:

Հունվարի սկզբին Մոսկվայում կայացավ Հյուսիսային Կովկասի
և Ուկրայինայի կոլտնտեսությունների բրիգադիերների խորհրդակցու-
թյունը: Ահա նրանցից մեկի հետ տեղի ունեցած զրույցի գրանցումը:

Տրուսկո — Մինսկի ի կովի շրջանի Հոկտեմբերի ան-
վան կուլտնտեսություն բրիգադիեր, Գրեպրոպետրով-
սկի մարզից, մի մարզ, վորտեղ, ինչպես հայտնի յե, թերու-
թյուններ շատ կան: Այդ բրիգադիերը հետևյալը պատմեց.

«Մինչև 1928 թիջն ապրել էմ հորս անհատական տնտեսությու-
նում: Հորս ընտանիքը բաղկացած էր 12 շնչից, իսկ հողն ընդամենը
4 հեկտար էր, կար մեկ ձի և մեկ կով: 8-ից մինչև 17 տարեկան հա-
սակը ծառայել էմ կալվածատեր Պետկոյի մոտ: 3 տարի հորթ էմ արա-
ծացրել, 2 տարի կիսաբանվոր էմ յեղել, հետո աշխատել էմ իրրե սե-
վագործ բանվոր: Յերը հոտաղ էյի, կալվածատեր Պետկոն իմ աշխա-
տանքի դիմաց տալիս էր հաց, հարդ կամ տարեկան 15 ուրբի փող:

Յերը անհատական տնտեսության մեջ էյի, յեկամուտս կազմում
էր տարեկան 170—200 ուրբի: Այդքատ էյինք ապրում շնորհիվ բա-
նող անասունի պակասի: Սովորական ուտելիքը հացն էր ու կար-
սոֆիլը, շատ սակավ՝ մեղեն:

1925 թվին գնացի Կարմիր բանակ գինվորական ծառայության:
Ծառայեցի 2 տարի: Կարմիր բանակում կրտսեր հրամկազմ էյի (Չոկի

հրամանատար), քաղաքագիտութիւն սովորեցի խմբակներում: Մասնակցում եյի պատի թերթերին, կարդում թերթեր և գրքեր»:

Պետք է, իմիջի այլոց, ասեմ, վոր կոլտնտեսութիւնների լավ դեկավարները և ակտիվիստների մեծ մասն անցել և կարմիր բանակի դպրոցը:

«Կոլտնտեսութիւն ևմ մտել 1930 թվին: Կյանքը կոլտնտեսութիւնում անհամեմատ լավ է, քան կյանքը անհատական տնտեսութիւնում, չխոսելով արդեն այն ժամանակվա մասին, յերբ բտորակութիւն եյի անում կալվածատեր Պետկոյի մոտ: 1931 թվին յես և կինս կոլտնտեսութիւնում վաստակեցինք մոտ 400 ուրբլի, 1932 թվին յես և կինս միասին արդեն վաստակեցինք 1600 ուրբլի: Ամբողջ տարվա համար ապահովված ենք հացով և կարտոֆիլով, մեր բանջարանոցից ստացած բանջարեղենով: Ունեմ մի խոճկոր և չորս հալ: Իմ բանջարանոցից վաճառել ևմ մինչև 150 ուրբլու բանջարեղեն:»

Վորդիս 8 տարի սովորում է դպրոցում, իսկ աղջիկս 3 տարի դաշտային աշխատանքների ժամանակ գտնվում է կոլտնտեսութիւն կազմակերպած մանկամտերներում: Կինս աշխատում է իրրև կթող: Մասնակցում է կոլտնտեսական ժողովներին, արտադրական խորհրդակցութիւններին: Բաժանորդ ևմ «Արարոնա» և «Կրեստյանսկոյե սելո» թերթերին:

1932 թվին գնել ևմ 370 ուրբլու մանուֆակտուրա: Ունեմ յերկարաճիտ կոշիկ, կոշիկ, կրկնակոշիկ, 3 ձեռք կոստյում: Կինս և յերեխաներս վոտնաման և հագուստ ունեն: Ունեմ բամբակ հագցրած տաք բաճկոն, բայց ուզում ևմ ունենալ մուշտակյա տաք վերարկու:

Կոլտնտեսականների 1932 թվի յեկամուտը 1930—31 թվի համեմատութիւնը աճել է: 1931 թվին 1 աշխորի դիմաց ստացել ենք 1 կիլոգրամ 300 գրամ, իսկ 1932 թվին՝ 2 կիլոգրամ 300 գրամ: Յես ինքս 1931 թվին կնաջս հետ միասին ամբողջ տարվա համար ստացել ևմ 33 փութ հաց, իսկ 1932 թվին ավանսի կարգով 30 փութ և դեռ լրացուցիչ հասնում է մոտ 15 փութ:

Մեր կոլտնտեսութիւն համար, վորը բաղկացած է 54 տնտեսութիւնից, այս տարի Ինեպրոտորդից 17 հազար ուրբլու միայն մանուֆակտուրա յե բաց թողնված, չհաշված այն, ինչ սպառողներացիայի գծով է ստացվում:

Այդ կոլտնտեսութիւններն իրենց հաջողութիւնները ձեռք են բերել այնպիսի պայմաններում, վորոնք տիպիկ են նաև մյուս կոլտնտեսութիւնների համար:

Նրանց որինակները ցայտուն կերպով ցույց են տալիս, թե այժմ արդեն ինչպիսի արդյունքների կարող են հասնել մեր բոլոր կոլտնտեսութիւնները՝ ճիշտ, բայլելիկյան ղեկավարութիւն ղեկաւարում:

Ղեկավարութիւն վորակի վիթխարի նշանակութիւնը հաստատվում է վոչ միայն այն կոլտնտեսութիւնների լուսարանումով, վոր-

րոնք նվաճումներ ունեն, այլև այն կոլտնտեսութիւնների լուսարանումով, վորտեղ անագին քանակութիւնը թերութիւններ կան, վորտեղ տնտեսութիւնը վատ է կազմակերպված և արդյունքները դեռևս ծայրաստիճանի անբավարար են: Դժբախտաբար, այդպիսի կոլտնտեսութիւններն անագին քանակութիւն են կազմում: Կարելի յե որինակներ բերել իրար կողքի գտնվող յերկու կոլտնտեսութիւնից, վորոնցից մեկը լավ է աշխատում, իսկ մյուսը վոչ մի բանի պետք չէ: Այսպիս, որինակ, Չերնեցովո գյուղի Առաջին հեծելազորի անվան կոլտնտեսութիւն կողքին, վորի մասին յես խոսեցի, 12 կիլոմետր հեռավորութիւն վրա գտնվում է նույն Կամենսկի շրջանի Նովոյասի-նովո գյուղի «Կոմիտերն» կոլտնտեսութիւնը:

7 ղեկավար աշխատողներից 5-ը ծառայել են սպիտակ բանակում իբրև յենթասպաներ և ակտիվ կամավորներ, կոլտնտեսական «ակտիվում» 14 յենթասպաներ կան:

Կոլտնտեսութիւնն ունի 270 տնտեսութիւն: Աշխկարգապահութիւնը կոլտնտեսութիւնում ցածր է: 800 աշխատունակներից 102-ը վաստակել են 20-ից մինչև 50-ական աշխուր, իսկ 67-ը՝ 20-ական աշխուրից էլ պակաս: Միջին հաշվով 1 աշխատունակ կոլտնտեսականին ընկնում է 70 աշխուրից պակաս:

Գրեթե 2 շաբաթ կալիչն աշխատել է առանց 32 ատամի, փչացնելով հացահատիկի գրեթե կեսը:

Չնայած յեղել է չբարձած կոլտնտեսական ամբար, բայց և այնպես հացահատիկը լցրել են կոլտնտեսականների անհատական ամբարները, վորտեղ և նա հափշտակվել է: Այդպիսով հափշտակվել է 2000 ցենտներից ավելի հացահատիկ:

Առաջին հեծելազորի անվան կոլտնտեսութիւնից վերցրել են լսկոմորիլը և ջարդել: Առաջին հեծելազորի անվան կոլտնտեսութիւն բուքսիրային բրիգադին վարչութիւն անդամներն ուժեղ դիմադրութիւն են ցույց տվել: Կոմիտերնի անվան այդ կոլտնտեսութիւնը բացառիկ վատ սիճակի մեջ է գտնվում: Ինչպես յերևում է, ընկ. Բուդչոնին «Առաջին հեծելազորում» «Կոմիտերնի» ընկ. Մանուիլուկուց «առաջ է անցել»: (Մի ծաղ):

Սալսկի շրջանի Շարլինսկ գյուղի Բուդչոննու անվան լավ կոլտնտեսութիւն կողքին, վորին գլուխ կանգնած է անկուսակցական, նախկին դասակի հրամանատար, վորտեղ գերակատարված են աշնանացանի և աշնանավարի պլանները, վորտեղ կա ամուր աշխկարգապահութիւն, կոլտնտեսականների տրամադրութիւնն ամողջ է ու կայտառ, վորովհետև աճում է կոլտնտեսական անասնապահութիւնը, ընդվորում միայն բանջարանոցներից ստացել են 22 հազար ուրբլի յեկամուտ, առատորեն հնձել են խոտը Բուդչոննու անվան հարևան ձիարուծարանում և 40 հազար փութ խոտով ապահովել են կոլտնտեսութիւն ու կոլտնտեսականների հանրայնացված և անհատական բոլոր անասուններին, — այդ կոլտնտեսութիւն կողքին մենք սեսանք նույն

գյուղխորհրդի «Ելլիչի ուղի» կոմունան, վորն ավելի յերկար գոյություն ունի, քան այդ կոլտնտեսությունը, բայց վատ վիճակի մեջ է գտնվում: Այս կոմունան գոյություն ունի 1923 թվից, մինչև անցյալ տարի գործը հաջող է գնացել, բայց մեռավ նրա նախագահ Գետմանը, կոմունիստ և լավ պարտիզան, բլիշը նրա փոխարեն առաջ քաշեց ծայրաստիճանի թույլ կուսակցական՝ տրակտորիստ Բիրիկին, վորը յերկու խոսք իրար կապել չի կարող, հանձնարարված գործը չի սիրում և իբրև նախագահ աշխատել չի ուզում:

Փաստորեն աշխատանքն սկսեց ղեկավարել մի դաշտավար՝ խարդախարարո յենթակուլակներից մի տղա, վորը խառնեց հաշվառումը, կոմունայում անտնտեսավարություն է տիրում, յեղիպատցորենը գեռնոյնմբերին էլ չեր հավաքվել, ահագին ցորեն անկալսել մնաց: Կուսբլիշում 16 կուսանդամ կա և 20 թեկնածու, բայց հենց նրանք են խախտում աշխարհապահությունը և գերվել են կուլակային տարրերին:

Կամ, որինակի համար, Ողեսայի մարզի Վոդնեսենսկի շրջանի Ռակովկա գյուղի «61 կոմունարի» անվան կոլտնտեսությունը, վորտեղ 209 տնտեսության համար աշխատում է 19 (!) հողուց բաղկացած վարչական անձնակազմ: Նախագահից բացի կա վճարովի քարտուղար և գանձապահ (թեև դրամարկղում շատ չնչին փող կա), 2 հաշվետար, 3 պահեստապետ և այլն: 37 հազար աշխորից վարչական անձնակազմին ընկնում է 7 հազար աշխոր: Կոլտնտեսության անդամներից շատերը (առավելապես ունեւորներից) 300—400-ական ուրլի պարտք ունեն, այդ պարտքը չի գանձվում, իսկ ըստ աշխորերի բաշխելու համար անշան գումար է նախատեսված: Այլուրի 60 տոկոսը բաժանել են հանրային սննդի ձևով, այսինքն այնպիսի մի ձևով, վորը չի խթանում աշխատանքի արտադրողականության բարձրացմանը և աշխատանքի դուրս գալուն: Շատ կոլտնտեսականներ ունեն 20—30-ական աշխոր ամբողջ տարվա համար:

Վատ տնտեսավարող, աշխատանքը վատ կազմակերպող, աշխարհապահության բացակայությամբ տառապող այդպիսի վատ կոլտնտեսությունների որինակները շատ են, և մենք այդ որինակները բերում ու բացահայտում ենք նրա համար, վորպեսզի ուղղենք գործը: Ամբողջ խառությամբ հայտաբերելով մեր թերությունները, մենք ջանջախել ենք և կլանջախենք կուլակային իդեոլոգիաների ամեն մի փորձ, վորոնց նպատակն է ոգտագործել կոլտնտեսությունների թերությունները կոլտնտեսությունների գաղափարը ող ցնդեցնելու համար:

Կոլտնտեսային շարժումն այժմ ավելի ամուր է, քան յերբիցե: Մենք այժմ վոչ միայն չունենք կոլտնտեսությունից դուրս գալու ղեպքեր, այլ, ընդհակառակը, մենք ունենք նոր հոսանք ղեպի կոլտնտեսություններ: Կոլտնտեսային շարժումն ընդհանուր առմամբ

բարձրացրել է մեր գյուղի կուլտուրական և քաղաքական մակարդակը:

Կոլտնտեսային սխտեմը մեզ տալիս է կոլտնտեսականների կուլտուրական և տնտեսական դրության արմատական բարելավման նշանակալի որինակներ: Այնտեղ, վորտեղ աշխատանքը վատ է դրված, վորտեղ ղեկավարներն իրենց բարձրության վրա չեն կանգնած, մենք ունենք վատ տնտեսություն, վատ կոլտնտեսություն: Դժբախտաբար, մեր կոլտնտեսային գործի է կազմակերպությունների ղեկավարների զգալի մասը, այդ թվում թե ՄՏԿ-ներում և թե խորհրտնտեսություններում, գեռես պատշաճ բարձրության վրա չեն կանգնած:

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԹՇՆԱՍՈՒ ՆՈՐ ՏԱԿՏԻԿԱՆ ՅԵՎ ՄԵՐ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՐԻ ՈՐԻՆԱԿՈՎ

Գյուղատնտեսության բնագավառում և գյուղի քաղաքական պայմանների մեջ մեր ձեռք բերած նվաճումները, ինչպես նաև գործնական աշխատանքի թուլություններն ու թերությունները, ցայտուն կերպով դրսևորվում են այնպիսի մի գործում, ինչպիսին են հացամթերումները: Դուք գիտեք, վոր հացամթերումները շարունակ, հեղափոխության բոլոր տարիների ընթացքում, յեղել են այնպիսի մի հարց, վորի շուրջը յեռացել է դասակարգային պայքարը և կուսակցության ներսում յեռացել են այն տարրերի կրքերը, վորոնք անդրադարձրել են դասակարգային թշնամու դիմադրությունը, կուլակային տրամադրությունները:

Ի՞նչ են ցույց տալիս հացամթերումները մեր ուժի գնահատման խնդրում և գործնական աշխատանքի ինչպիսի թույլ բնագավառներ են բաց անում նրանք: Ի՞նչ են ցույց տալիս հացամթերումները դասակարգային պայքարի կոնկրետ ձևերի վերլուծման տեսակետից:

Ընկ. Ստալինն իր գեկուցման մեջ արդեն տվյալներ բերեց հացամթերման չափի մասին: Պարզ է բոլորիս համար, բոլոր նրանց համար, ովքեր աշխատել են հացամթերումների գծով,— վոր ներկայի հացամթերումներն ու նրանց թերությունները վոչ մի կերպ չեն կարող համեմատվել նախկին հացամթերումների ու նրանց դժվարությունների հետ, թե իրենց սոցիալական եյությամբ և թե իրենց քաղաքական իրադրությամբ արմատապես տարբերվում են այն հացամթերումներից, վոր մենք ունեցել ենք հնգամյակից առաջ և հրեզամյակի սկզբում:

1928—29 թվերին յես առիթ եմ ունեցել հացամթերումների առնչությամբ լինելու Ուրալում և Սիբիրում: Այն ժամանակ մենք գյուղում ունեյինք կուլակի բացահայտ յերույթներ: Կուլակները բացահայտ դիմադրություն էյին ցույց տալիս, բացահայտ կերպով ասում էյին. «Մենք ձեզ հաց չենք տա, մեզ առևտրի լիակատար ազատություն տվեք, մեզ հնարավորություն տվեք հացը վաճառելու փութը 15 ուրբ»

լով: Ի՞նչ էք կպել չքավորներից, հենվում էք այդ լողորների վրա: Ուժը մենք ենք: Հացը մեզ մոտ է»:

Նրանց արտահայտիչներն էլին կոնդրատյեվականները, իսկ մեր կուսակցութան մեջ՝ բավականաչափ հայտնի անուններ, վորոնք փորձում էին կուլակին փրկել նրանով, վոր պայքարում էին այսպես կոչված արտակարգ միջոցների դեմ, վորոնք, ինչպիս հայտնի յե, այն ժամանակ գործադրվում էին կուլակային տարրերի նկատմամբ:

Յեթե այն ժամանակ կուսակցութունը հարձակում չսկսեր կուլակի վրա, յեթե նա արտակարգ միջոցներ չծավալեր, յեթե նա չծավալեր ինքնապարտավորութունների ձևերը (գուք հիշում եք, թե ինչպես այս ամբողջից աջ ուղիղնիստները հարձակվեցին ինքնապարտավորութունների ձևի վրա), — կուլակն իր հետևից կտաներ միջակների գգալի խմբեր, և մենք չէինք ունենա կոլտնտեսութունների համար նախապատրաստված գյուղ, չէինք ունենա այն հաղթանակները, վոր ունենք այժմ: Պայքարը կուլակի դեմ, մասսաների կազմակերպումն ինքնապարտավորութունների շուրջը, ոժանդակող հանձնաժողովների կազմակերպումը, լավագույն չքավորների և միջակների կազմակերպումը հացամթերումների կատարման համար, խորհուրդների և կուսակցութան շուրջը, — այս ամենը հող, հիմք ստեղծեց կուլակատիվացման ծավալման համար:

Ի՞նչ ունենք մենք այժմ: Այժմ, յերբ գյուղ ես գալիս, տեսնում ես, վոր ներկա դրութունը վոչ մի կերպ չի կարելի համեմատել այն դրութան հետ, վոր կար առաջ: Այժմ գյուղում կա մեր հզոր կազմակերպութունը, տնտեսական և կազմակերպական ներգործութան ուժեղագույն լծակները, կա այնպիսի մի մասսա, վորը յերբեմն անգիտակից է, — յես այդ մասին դեռևս կխոսեմ, — բայց մեր ղեկավարութամբ անցել է կուլակի դեմ պայքարելու և նրան վերացնելու դրպրոցով: Դա մեր գյուղն է:

Կուլակային տարրերն այժմ բացահայտ կերպով հանդես չեն գալիս և ստիպված են դիմակավորվել, կոլտնտեսականներ ձևանալ: Յեթե այժմ ևս մենք գյուղում դեմ ենք առնում մի ամբողջ շարք թերութունների, դժվարութունների, ապա այդ բոլորում է մեր աշխատանքի թուլութունից և վոչ յերբեք ուժերի դասակարգային դասավորումից գյուղում: Դասակարգային ուժերի դասավորման տեսակետից գյուղում մենք այժմ ուժեղ ենք առավել քան յերբեկեց: Դրանով էլ բացատրվում է այն փաստը, վոր, չնայած դժվարութուններին, մենք վերջին յերկու տարում մթերեցինք 2 և կես միլիարդ փութ հաց, այսինքն ճիշտ այնքան, վորքան մթերվել է 5 տարում նախքան հնգամյակը (այսինքն 1923 — 28 թվերին): Սակայն 1932 — 33 թվին հացամթերումներն ընթանում են ավելի մեծ դժվարութուններով, քան 1931 — 1932 թվին:

Կոլտնտեսութունների աշխատանքներում յեղած թերութուններն ու հացամթերումների կատարման դժվարութուններն առաջա-

նում են նրանից, վոր կոմունիստների կողմից կոլտնտեսութունները ճիշտ չեն ղեկավարվում, վոր կուսակցականները ճիշտ գործնական աշխատանք չեն կատարում, չեն կարողանում պայքարել դասակարգային թշնամու դեմ, չեն կարողանում ճիշտ ուղղութուն տալ մեր ուժերին:

Կարիք չկա մանրամասնորեն կանգ առնել այն բանի վրա, վոր դասակարգերը դեռ գոյութուն ունեն և վոր դասակարգային պայքարը դեռ շարունակվում է, և շատ սուր կերպով: Այդ մասին բավական մանրամասնորեն ասաց ընկ. Ստալինը թե Գաղբյուրոյի ու Կվձ-ի նախագահութան նոյեմբերի 27-ի միացյալ նիստում արտասանած ճառում և թե միացյալ պլենումում իր տված զեկուցման մեջ: Ամեն մի բայը կի կհ համար պարզ է, վոր դասակարգային թշնամիների դեմ հարկավոր են պայքարի սուր միջոցներ, հարկավոր է գործադրել պրոլետարական ղեկատուության ամբողջ ուժն ու հզորութունը: Դա այժմ կարծես պարզ է անգամ ընկ. ընկ. Ռիկովին, Տոմոկուն և Բուխարինին, վորոնք դասակարգային պայքարի մարման տեսաբաններ էին:


Բայց հարցը միայն այն չէ, վոր ընդհանրապես հասկանան, թե դասակարգային պայքար գոյութուն ունի, այլև այն, վոր կարողանան յուրաքանչյուր ավյալ վայրում, ավյալ ետապում քննել դասակարգային պայքարի կոնկրետ դրսևորումները:

Հացամթերումների որինակից ամենայն պարզութամբ յերևում է, թե մեր կոմունիստներից ինչքան շատ մարդիկ չեն հասկացել նոր պայմանները, դասակարգային թշնամու նոր տակտիկան, չեն կարողացել մարքսիստորեն, լենինարար, մեկ կոնկրետ փաստի հիման վրա բաց անել, քանզեղ դասակարգային թշնամու նոր տակտիկայի ամբողջ կծիկը:

Ստանալով առանձին փաստեր հացամթերումների ընթացքի վերաբերյալ, մասնավորապես Հյուսիսային Կովկասում, ընկ. Ստալինը, մեզ տեղերն ուղարկելով, այդ առանձին փաստերի հիման վրա մեզ պայքարի հստակ ուղի տվեց վոչ թե պարզապես հացամթերումների պլանի կատարման համար, այլ պայքարի ուղի կոլտնտեսականների համախմբման համար, պայքարի ուղի ցանքսի ու հացամթերման սարտաժ կազմակերպող դասակարգային թշնամու դեմ: Առանց մեր շուրջը կատարվող իրադարձութուններն ընդհանրացնելու, իմաստավորելու այդ կարողութան մենք չէինք կարողանա ծավալել մեր ուժերը կուլակի կողմից կազմակերպած՝ ցանքսի ու հացամթերումների սարտաժի դեմ մղվող պայքարում:

Ընկ. Ստալինը Գաղբյուրոյի և Կվձ-ի նախագահութան նոյեմբերի 27-ի միացյալ նիստում արտասանած ճառում ասաց, վոր հացամթերման բնագավառում ընթացող պայքարի արվա դժվարութունները բացատրվում են յերկու հանդամանքով: «ա) նրանով, վոր կոլտնտեսութուններն ու խորհանտեսութուն-

42703



4233 9/ 17

ներն են խցկվել հակախորհրդային տարրերը և այնտեղ փնասարարու-
թյուն են կազմակերպում, բ) նրանով, վոր մեր գյուղական կոմու-
նիստների զգալի մի մասը վոչ-ճիշտ, վոչ-մարքսիստական մոտեցում
աւնի կոլտնտեսութունների և խորհանտեսութունների նկատմամբ...

...Մեր գյուղական և շրջանային կոմունիստները խիստ իրեալա-
կանացնում են կոլտնտեսութունները: Նրանք յերբեմն կարծում են,
թե քանի վոր կոլտնտեսութունը տնտեսության սոցիալիստական ձև
ե հանդիսանում, ապա դրանով ամեն ինչ տրված է և կոլտնտեսու-
թյուններում վոչ մի հակախորհրդային կամ սաբոտաժնիկային բան
չի կարող լինել, իսկ յեթե կան սաբոտաժի և հակախորհրդային յե-
րևույթների փաստեր, ապա պետք է այդ փաստերի կողքով անցկե-
նալ, վորովհետև կոլտնտեսութունների նկատմամբ կարելի յե միայն
համոզելու միջոցով գործել, իսկ հարկադրման մեթոդներն անգործա-
գրելի յեն առանձին կոլտնտեսութունների և կոլտնտեսականների
նկատմամբ: Կարիք չկա ասելու, վոր կոլտնտեսութունների վերաբերյալ
այդպիսի հայացքը վոչ մի առնչութուն չունի լենինիզմի հետ: Լենի-
նյանները յերբեք չպետք է իրեալականացնեն կոլտնտեսութուններն
ու կոլտնտեսականներին: Նրանք պետք է լուրջ ու կոնկրետ կերպով
նայեն իրերի վրա, առանց վորևէ Ֆետիշիզմի՝ կոլտնտեսութունների
և կոլտնտեսականների նկատմամբ:

...Ի՞նչ է կոլտնտեսական գյուղացիութունը: Կոլտնտեսական
գյուղացիութունը բանվոր դասակարգի դաշնակիցն է: Այդ գյուղա-
ցիության վիթխարի մեծ ամասնութունը խորհրդային իշխա-
նության հենարանն է հանդիսանում գյուղում: Բայց այդ դեռևս չի
նշանակում, թե կոլտնտեսականների և կոլտնտեսութունների մեջ չեն
կարող լինել խորհրդային իշխանությանը դեմ գնացող, փնասարարնե-
րին աջակցող, հացամթերման սաբոտաժին աջակցող առանձին շոկատ-
ներ: Հիմար բան կլինի, յեթե կոմունիստները, յելնելով այն բանից,
վոր կոլտնտեսութունները տնտեսության սոցիալիստական ձև են հան-
դիսանում, այդ առանձին կոլտնտեսականներին և կոլտնտեսութուն-
ներին չպատասխանեյին ջախջախիչ հարվածով»:

Շատ գյուղական կոմունիստներ չեյին հասկացել այն առանձնա-
հատկութունները, վոր ունի դասակարգային պայքարը տվյալ ետա-
պում: Նրանց թվացել էր, թե յերբ մենք խոսում ենք կուլակի մա-
սին, այն աղղեցության մասին, վոր ունի կուլակը մենատնտեսների և
կոլտնտեսականների վրա,— դա ձևական բան է, իրականության մեջ
կուլակ չկա, կուլակին վերացրել են և վաղուց վտարել: Ճիշտ է,
վոր կուլակին մենք հիմնականում վերացրել ենք իբրև դասակարգ:
Բայց ամենախոր սխալ կլինի կարծել, թե արդեն վերացված են
բոլոր կուլակները, թե կուլակային դիմադրությունն արդեն անհետա-
ցել է, թե վերացված է դասակարգային պայքարը:

Գյուղում գեռ մնացել են կուլակության ներկայացուցիչները:
Նրանք մեր կողմից ջախջախված, զգզված են, կորցրել են նախկին

գորությունը, բայց դեռ կենդանի յեն: Կենդանի յեն և փորձում են
մեր ամեն մի վրիպումը, մեր աշխատանքի ամենափոքր թուլությունն
ոգտագործել իրենց ագիտացիայի համար, կոլտնտեսութունները քայ-
քայելու համար, պրոլետարական պետությանը դիմադրություն կազ-
մակերպելու համար: Դա, առաջին, չվտարված կուլակների մի մասն է,
յերկրորդ՝ կուլակության մեջ վերածած և նրան սերտորեն զոդվող
ունեոր գյուղացիները, յերրորդ՝ աքսորից փախածները, վորոնք
թաղնված են իրենց ազգականների մոտ, յերբեմն էլ «սրտացավ» կու-
սակցականների մոտ, վորոնք կուսակցության տոմս ունեն գրպա-
նում, բայց գործնականում աշխատավորության շահերին դավաճանող-
ներ են հանդիսանում: Յեմ վերջապես բուրժուական՝ սպիտակ գվար-
դիական, պետլյուրովյան, դադախային, եսերական և այլ տիպի ինտե-
լիգենցիայի ներկայացուցիչները:

Նրանք հակահեղափոխական ագիտացիա յեն մղում, նրանք ահա-
բեկում են ազնվորեն աշխատող կոլտնտեսականներին, նրանք փնասա-
րարական աշխատանքով են զբաղվում, ներսից քայքայում են կու-
տնտեսութունները:

Կուլակային դիմադրությունը, կուլակային հոգեբանությունը
դրսևորվում է վոչ միայն ֆիզիկական անձանց— կուլակների, դասա-
կարգային թշնամիների միջոցով, կուլակային իդեոլոգիան կենդանի յե
մնացորդների ձևով, վորոնք տակավին արմատանում են վորոշ կու-
տնտեսականների ուղեղներում և վարմունքում: Կուլակային աղղեցու-
թյունը համակել է անգամ գյուղական կոմունիստների, կոլտնտեսու-
թյունների և ստանիցանների ղեկավարների առանձին խմբերին:

Կոլտնտեսականների լայն մասսաները վերջին տարիների վոր-
ձով համոզվել են կոլտնտեսութունների առավելութունների մեջ:
Դասակարգային թշնամին այդ հասկանում է և փոխել է իր տակտի-
կան: Նա բացահայտ կերպով դեմ դուրս չի գալիս կոլտնտեսութուն-
ներին, արտաքուստ նա կողմնակից է նրանց: Բայց նա փորձում է
կոլտնտեսութունները ներսից քայքայել, հրահրելով մանր-սեփակա-
նատիրական հոգեբանությունը, մասնավոր-տնտեսական կուսակա-
նաբանները, վորը կոլտնտեսականները ժառանգել են մասնավոր սեփակա-
նատերերի սերունդներից և դեռ ամենևին չեն վերացրել: Կուլակը
փորձում է կոլտնտեսութուններն ամլացնել նրանց սոցիալիստական
եյությունից և այն դարձնել իրեն կազմակերպությունն՝ ընդդեմ
խորհրդային պետության, ընդդեմ պրոլետարական դիկտատուրայի:

Վորոնք են դասակարգային պայքարի հիմնական դրսևորում-
ները գյուղում: Դա ամենից առաջ կուլակի կազմակերպչական դերն է
հացամթերման և ցանքի սաբոտաժի գործում: Դա գլխավորն է ու
հիմնականը:

Յերկրորդ, տնտեսական փնասարարության կազմակերպումը կու-
տնտեսութուններում և խորհանտեսութուններում, սկսած ցանքից

մինչև հացամթերումները, սկսած, յես կասեմ, կոլտնտեսություններին
մինչև վորոշ կենտրոնական հողային որգանները:

Յերրորդ, աշխարհապահության խախտման կազմակերպումը
կոլտնտեսություններում և խորհանտեսություններում:

Չորրորդ, մանր սեփականատիրոջ՝ յերեկվա մենատնտեսի՝ մանր-
բուրժուական ունակություններն ոգտագործող կուլակի պայքարի
զենքերին մեկն է հանդիսանում կոլտնտեսության և խորհանտեսու-
թյան հանրային սոցիալիստական սեփականության համախառն կազ-
մակերպումը: Յեմ այս ամենի հիման վրա վորձ է արվում կոլտնտե-
սության և նույնիսկ խորհանտեսության գովողաբար հասկացված
շահերը հակադրել պրոլետարական պետության շահերին, վորձ է ար-
վում կոլտնտեսությունը դարձնել հակախորհրդային տարրերի կազ-
մակերպական մի ձև պրոլետարական պետության դեմ պայքարելու
համար:

Միայն մենք չենք, վոր հարվածելու կարևորագույն կետեր ենք
ընտրում, այդպիսիք ընտրում են նաև դասակարգային թշնամիները:
Այդ համապատասխանում է մեր հեղափոխության վորոշ ետապներին,
վորոշ մարտական ճակատամասերին: Քաղաքացիական պատերազմի
ընթացում թշնամին մեզ հիմնական հարված է հասցնում Կարմիր բա-
նակում: Նա ձգտում էր թափանցել այնտեղ և այնտեղ ել մեզ փաս-
հասցնել: Յերը սկսեց դարգանալ մեր արդյունաբերությունը, փասա-
բարությունը ծավալվեց արդյունաբերության բնագավառում, թե վե-
րևից և թե ներքևից: Այժմ թշնամին փորձում է մեզ հարված հասց-
նել առավելագույն գյուղատնտեսության գծով, խորհանտեսություն-
ներին և կոլտնտեսություններին: Հարվածել այն բնագավառը, վոր-
տեղից մենք դուրս ենք մղում դասակարգային թշնամուն, այն բնա-
գավառը, վորտեղ մեր ուժերն աճում են որբստորե, բայց վորտեղ տա-
կալին շատ թույլ տեղեր կան: Դասակարգային թշնամիները կարո-
ղանում են ճարպկորեն ոգտագործել մեր գործնական թուլություն-
ները—թշնամիներին հայտաբերելու և մերկացնելու տեղական աշ-
խատողների անկարողությունը, կոլտնտեսական ակտիվի կազմակեր-
պելու անկարողությունը, գյուղական կուսակազմակերպությունների
հեղափոխական աշխարհության բացակայությունը:

Մի շարք ձերբակալված կուլակներ բացահայտորեն պատմում
եյին, թե ինչպես են կազմակերպել ցանցառ վարուցանը, ինչպես են
սերմացուն գողացել և մեկ հեկտարում 7 փթի փոխարեն 4 փութ ցա-
նել, այսինքն վոր միայն գողացել չցանված 3 փութը, այլ և բերքա-
տվությունն իջեցրել են 2—3 անգամով:

Կուլակներն աշխատանքային կարգապահության վիժեցում են
կազմակերպում կոլտնտեսություններում: Ձերբակալված կուլակ փա-
սարարներին մեկը, որինակի համար, հետևյալն էր պատմում. «Չերվո-
նի պրապոր» կոլտնտեսությունում կար մի առաջավոր պարտիզանա-
կան բրիգադ: Նա ամբողջ ստանիցայում համբավ էր ձեռք բերել իր

որինակելիությամբ, նա առաջ էր մղում մյուսներին: Յես խնդրեցի,
վոր ինձ վերցնեն այդ բրիգադի մեջ: Յես հրաժարվեցի բրիգադի լի-
նել, վորովհետև բրիգադիին հեշտ է բռնել, բայց կարողացա դառնալ
բրիգադի հաշվետու»: Յեմ իբրև հաշվետու աշխատելով՝ նա քայքայեց
այդ բրիգադը: Բրիգադը ցրեցին, թե շրջկոմը և թե բլիշը բավական
ուժ ունեցան այդ անելու համար: Այդ հեշտ էր: Բայց դասակարգա-
յին թշնամու գործողությունն իմանալու, վաճ միայն ամբողջ ստանի-
ցայում, այլ և ամբողջ շրջանում իր աշխատանքով համբավ ձեռք բե-
րած աչքի ընկնող բրիգադի քայքայումը թույլ չտարու համար բա-
վականաչափ խելք չունեցան: Տեղական կոմունիստները պարզամիտ
մարդիկ դուրս յեկան, դասակարգային աշխարհություն չցուցաբերեցին,
դասակարգային թշնամու բուն դեմքը բացահայտելու անկարողու-
թյուն ցուցաբերեցին:

Կոլտնտեսությունների ներսում յեղած հակահասարակական
տարրերի կողմից պրոլետարական պետությանը խարելու փաստը
ցայտուն կերպով շարադրված է Կրասնոդարի շրջանի Նովոտիտա-
րովսկ ստանիցայի «Իլյիչի պատգամ» կոլտնտեսության հաշվապահ
Պերովի ցուցմունքներում:

«Մշտանացանի շրջանում շատ հացահատիկ գողացվեց: Որինակ,
5-րդ հարյուրյակում գողացվեց մի ամբողջ սայլ ցորեն: Չնայած նոր-
ման հաճախ չէր ցանվում, բայց հաշվետվությունների մեջ միշտ ցույց
էր տրվում սանձանված նորման...»

Մեքենավոր Մվետլիչին, վորը «մեր մարդն» էր, փոխեց մադի
ցանցը, դրա համար ել յերկրորդ տեսակը շատ յեղավ: Յերկրորդ տե-
սակի ցորենը հացամթերման համար չեյին վերցնում: Հաճախ ստուգ-
ման համար գալիս եյին ստանիցայի խորհրդի ու շրջկոմի ներկա-
յացուցիչները և յերկրորդ տեսակի վրա ուշադրություն չեյին դարձ-
նում:

Այդ ժամանակվանից կախելիս սկսեցին յերկրորդ տեսակի ցո-
րենը շատ թողնել: Միքանի դեպքերում նա անգամ առաջին տեսա-
կից ել լավ էր: Հետագայում նրա մի մասը մեզ մոտ նույնիսկ գործա-
դրեցին ցանքսի համար: Յերկրորդ տեսակի այդ ցորենը ստանիցայի
խորհրդի և ՄՏԿ-ի հաշվետվության մեջ ցույց չէր տրվում:

Հուլիսի սկզբին մեզ մոտ կախեցին չհասած հացահատիկը (պա-
րենի համար): Հարդի մեջ մնաց ցորենի 30—40 տոկոսը: Հարդը դեզ
արին իբրև յերկրորդ անգամ կախվելու յենթակա, բայց հաշվապա-
հությունում դա հաշվառման մեջ չկար»:

Գողության ձեռքը խիստ բազմազան են: Հուլիս և ոգոստոս
ամիսներին խորհանտեսությունների ու կոլտնտեսությունների դաշ-
տերում յերևացին «վարսավիրաները» (ծիծաղ), վորոնք դանակնե-
րով և մկրատներով ահագին քանակությամբ հասկեր կտրեցին: Ու-
րիչներն ափելի գզույշ վարվեցին, հասկերը չեյին կտրում, այլ ցողուն-
ները խցկում էյին պարկերը և թափահարում: Հասկը վորջ էր մնում,

բայց դատարկ: Կարելի չէ ժամանակ այդպիսի դաշտերը ցածր բերքատուությունն էլին ցույց տալիս: Տեղական աշխատողները ձեռքը թափահարում էլին և ասում. «Վոչինչ անել չես կարող, բնության աղետ է, մշուշն է կոխել, հափշտակել»: Հափշտակել, այն, բայց վոչ թե բնությունը, այլ մարդը: (Ծիծաղ):

Ահագին գողությունն է կատարվում ելեվատորներում, ջրաղացներում և մթերման կայաններում: Բացված են մասսայական հափըռտակումներ և հացի անդորրագրերի կեղծումներ:

Սորհատեսուցություններում ծագում է վոչ պակաս գողություն: Երջագայողներ նշանակվում են 5—10 դաշտի համար մեկական մարդ, իսկ նրանցից շատերը, որինակ՝ Տարասովի հացահատիկային խորհատեսուցությունում և «Գիգանտ» խորհատեսուցությունում, իրենք են ակտիվ մասնակցում հացի հափշտակմանը: «Գիգանտ» խորհատեսուցությունում մեր այցելած հենց միայն 8-րդ բաժանմունքում հայտաբերվեց 8 հազար փութ ցորենի հափշտակում: Յես հավատացած եմ, վոր չհայտաբերված հափշտակումներն ավելի շատ են:

Տարասովի խորհատեսուցության 2-րդ բաժանմունքի բլիժի քարտուղարը, վարիչը, պահեստապետը — բորբն էլ ինքնամատակարարմամբ են զբաղվել: Բեռնատար ավտոմոբիլները լիքը ցորեն բարձած ուղարկել են հարևան գյուղերը իրենց ազգականներին: Սորհատեսուցությունը, չնայած ընկ. Յուրկինի այն հրահանգին, թե հացի հանձնումը պետք է վերջացնել նոյեմբերի 15-ին, — մեր այցելության պահին, այն է՝ նոյեմբերի 19-ին, չէր կատարել ընկ. Յուրկինի առաջադրության 4 տոկոսն անգամ: Դիրեկտոր Ֆեդորենկոն այդ նրանով էր պատճառաբանում, թե միայն գարնանացանի համար է հացահատիկ մնացել: Իսկ յերբ մենք քանդեցինք պահեստների կնիքները, ապա այնտեղ դուրս յեկավ 27 հազար փութ ավելի, քան ցույց էր տրված խորհատեսուցության բոլոր հաշվապահական մատյաններում:

Շատ կոմունիստների սխալը, — այն, վոր նրանք չեն հասկանում զանազան պաշտոններով (հաշվետար և այլն) կոլտեսուցությունները խցկված դասակարգային թշնամու նոր տակտիկան, իրեալականացնում են կոլտեսուցությունները, — այդ սխալը հենց ամենասուր բնույթ է ստացել հացամթերումների շրջանում: Շատերն այնպես են պատկերացրել, թե հարկավոր է գործել միայն համոզելով, խնդրելով, ազիտացիայով, այն էլ վատ, վոչ-հմուտ ազիտացիայով:

Ստալին: Ազիտացիա մղել չի նշանակում միայն համոզել, այլև մերկացնել:

Կապանովիչ: Իսկ նրանք կարծում էլին, թե ազիտացիա մղել նշանակում է խնդրել միայն, վոչ թե մերկացնել, վոչ թե պայքարել և քննադատել բոլոր նրանց, ովքեր վիժեցնում են մեր պլանները: Դեռ ավելին. գյուղխորհուրդները, վորոնք, իբրև իշխանության որգաններ, պետք է ակտիվ մասնակցեն հացամթերման վողջ աշխատանքին:

տանքին, այս հացամթերումների ժամանակ անբավարար աշխատանք կատարեցին:

Իսկ զիտեք, վոր մի ժամանակ, դեռ 1929 թվին, յերբ կոլտեսուցություն շարժումն սկսեց բուռն թափով զարգանալ, միքանիսները հարց դրին՝ հարկավոր են, թե՞ հարկավոր չեն գյուղխորհուրդները: Միքանի մարդիկ արտահայտվեցին գյուղխորհուրդների մահացման, վոչնչացման ոգտին: Ահա, որինակի համար, Դմիտրիյեվի հողվածը կենտրոնական սեահող մարզի մարզկոմի «Լենինյան ուղի» ժուրնալի 1929 թվի 15-րդ համարում. «Տվյալ գյուղում կոլտեսուցություն կազմակերպելով գյուղխորհուրդին մնում են միայն վարչա-հաշվառման և որինականությանը վերաբերող հարցերը, տեսեսական և կուլտուրական շինարարության բոլոր հարցերն ամբողջապես կանցնեն կոլտեսուցությանը: Հարց է ծագում, արժե՞ դրա համար պահել գյուղխորհուրդները: Մեր կարծիքով, դրանում կարիք չկա»: (Ծիծաղ):

Այն ժամանակն ևեթ կի-ն և կենագործկոմը խորհրդակցություն հրավիրեցին և ջախջախեցին այդ թեորիան: Սակայն գործնականում մինչև այժմ էլ մի շարք դեպքերում գոյություն ունեն այնպիսի գյուղխորհուրդներ, վորոնք կանգնած չեն իրենց խնդիրների բարձրության վրա, և վոչ թե նրա համար, վոր գյուղխորհուրդներն ինքնին վատ են, այլ նրա համար, վոր այնտեղ, վորտեղ գլխավորում են լավ բայլեիկները, գործը լավ է գնում, իսկ այնտեղ, վորտեղ անպետք մարդիկ են, գործը վատ է գնում: Մեր պրոլետարական դիկտատուրան իր մեջ միավորում է չտեսնված լայն դեմոկրատիան՝ խորհրդային դեմոկրատիան, համոզելու չտեսնված ուժը (աշխարհում վոչ մի պետություն չունի համոզելու այնպիսի ուժ, համոզելու այնպիսի լծակներ, վորպիսիք ունի մեր յերկիրը, մեր խորհրդային պետությունը, մեր կուսակցությունը) և միաժամանակ հարկադրելու բավականաչափ ուժ ու գորություն:

Տեղական շատ աշխատողների մոտ բացակայում է համոզման և հարկադրանքի տարրերի շողկապումը: Յեվ այդ պատճառով, ի միջի այլոց, հաճախ մեկ ծայրահեղությունից մյուս ծայրահեղությանն են նետվում. կամ միայն նրանով են զբաղվում, վոր զրուցում են, ազիտացիա չեն մղում, իսկ ավելի ճիշտ կլինի ասել՝ շատախոսում են, վորովհետև չի կարելի ազիտացիան նույնացնել շատախոսության հետ, կամ ընկնում են մյուս ծայրահեղության մեջ և, շչեդրինյան կրակոտ վարչարարի նման, սկսում են աջ ու ձախ շոայլել իրենց վարչական կամայականությունը:

«Ձախ» խոտորումների դեմ հարկավոր է ջախջախիչ պայքար մղել: Հարկավոր է վճռական հակահարված տալ բոլոր նրանց, ովքեր աջ ու ձախ վարչարարում են և փոխանակ դասակարգային թշնամուն հարվածելու՝ խփում են մեզ աջակցող գյուղացուն և դրանով նրան խոտվեցնում են մեզ հետ, բոլոր նրանց, ովքեր անհրաժեշտ վարչական միջոցները չեն շողկապում մասսայական աշխատանքի հետ, չեն կազ-

մակերպում ակտիվին և մասսաներին: Յերբ Ուկրաինայում շրջկոմները քարտուղարների խորհրդակցություն հրավիրվեց, նրանցից մի քանիսն իրենց անգործունեությունը բացատրեցին նրանով, թե վախենում են խոտորումներից: Ուկրաինայի խոտորում բառը պրկում (по-рекручивание) են ասում: Յես այդ շրջկոմների քարտուղարներին ասացի. «Կա ուկրաինական մի առած—վորսիր, բայց մի պրկիր: Ի՞նչ անցյալ տարի բազմաթիվ լուրջ սխալներ արիք: Այս տարի, խոտորվելուց վախենալով, դուք վորսռել եք չպրկելու համար բոլորովին չորսել»: (Մի ծ ա դ):

Գլուխ կորցնելը, դրույթները չհասկանալը վոչ միայն գյուղական ու շրջանային աշխատողների մոտ կար, այլև բազմաթիվ մարզային և յերկրային աշխատողների մոտ:

Այնինչ Համկ(բ)Կ ԿԿ-ի Քաղբյուրոն դեռ մթերումներեց ա 1932 թվի հունիսի վերջերին, ընկ. Ստալինի առաջարկությունը և երկրկոմների, մարզկոմների քարտուղարների և յերկրային ու մարզային գործկոմների նախագահների խորհրդակցություն եր հրավիրել: Խորհրդակցությունում մեծ վորոշում ընդունվեց 1932 թվի հացամթերումների կազմակերպման մասին, վորտեղ ի միջի այլոց ասված է.

«ԿԿ-ն ընդգծում է, վոր գյուղի ներկա պայմանները բնորոշվում են կոլտնտեսությունների ու խորհրդատեսությունների լիակատար հաղթանակով գյուղատնտեսության մեջ: Իրանով իսկ վորոշվում է սոցիալիստական հատվածի գերակշռող նշանակությունը ներկա հացամթերման կամպանիայում: Սակայն կուլակային տարրերի մնացորդների առկայությունը, կուլակային ազդեցություն առկայությունը անհատական տնտեսությունների և կոլտնտեսականների սոսանձին խավերի վրա, ցույց է տալիս, վոր անխուսափելի յե կուլակային տարրերի դիմադրությունը հացամթերման գործին, անհրաժեշտ է, վոր կուլակական կազմակերպությունները պարաստ լինեն ջախջախելու այդ դիմադրությունը և անպայմանորեն կատարելու հացամթերման հաստատված պլանը»:

Իրա համար առաջարկվում էյին մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ ավելի սերտ ու կոնկրետ մոտեցում ունենալ շրջաններին, գյուղերին և կոլտնտեսություններին, խուսափել անցյալ տարվա սխալներից, վորպեսզի մեկ շրջանին, գյուղին, կոլտնտեսությանը հարկ յեղածից ավելի մեծ, իսկ մյուսին հարկ յեղածից վորք պլան չարվի:

Բայց տեղական շատ աշխատողներ, այդ թվում նաև մարզային աշխատողների մի մասը, չլսեցին ԿԿ-ի ազդանշանը, հարկ յեղածին պես չհասկացան հացամթերման վերաբերյալ դերեկտիվները: Արդյունքը յեղավ այն, վոր,—պետք է ուղղակի ասել,—հացամթերման սուղին ամիսներին ժամանակը կորցվեց: Այդ փաստ է, ընկերներ: Իսկ հացամթերման առաջին ամիսները բացառիկ նշանակություն ունեն տեմպերն առաջ մղելու համար, մարզիկանց մորիլիզացիայի յենթար-

կելու համար, կազմակերպությունը համախմբելու համար: Չե վոր հացամթերումը սոսկ կամպանիա չէ, դա խոշորագույն քաղաքական գործ է: Յեվ այն կետը, վորի մասին յես ասացի, այն է՝ «անպայմանորեն կատարել հացամթերման հաստատված պլանը»,— այդ կետն այնուամենայնիվ տեղական աշխատողների գլուխը չմտավ:

Հացամթերման փոխարեն մարդիկ զբաղված էյին ֆոնդեր ստեղծելով: Պարզ է, վոր յերբ հացամթերման ես գնում, ապա պետք է մարդկանց մորիլիզացիայի յենթարկես այն բանի շուրջը, վոր պետական պարտավորությունների կատարումը կարևորագույն, առաջնահերթ խնդիր է:

Այնինչ մի քանի յերկրներում և մարդերում դիրքավորում էյին տալիս ստեղծելու գանադան ֆոնդեր՝ սերմացուի, ապահովագրական, ուսուցչական, բազմանդամ ընտանիքների, հանրային սննդի, կոլտնտեսական առևտրի և նման այլ ֆոնդեր, իսկ հացամթերումը վերջին տեղն էյին թողնում:

Հասկանալի յե, վոր նման դերեկտիվները դեգորինտացիայի էյին յենթարկում շրջանային և գյուղական աշխատողներին:

Մենք գիտենք, վոր յեթե ուզում ես մարդկանց վտաքի հանել մեծ գործի համար, ապա վերապահումների հերոս մի լինիր, նրանց ուղղակի ասա, վոր հացամթերման պլանի կատարումը կոմունիստի առաջնագույն պատվիրանն է: Յեթե շրջանային աշխատողը կամ գյուղական կոմունիստը քո դերեկտիվներին և քո հանրի մեջ ամենափոքրիկ իսկ անպարզություն նկատի, իսկույն ևեթ դրան կպատասխանի նրանով, վոր կսկսի ֆոնդեր մթերել, իսկ հացամթերումը հետաձգել: Նրանք այդ կերպ կպատասխանեն առավել ևս նրա համար, վոր նրանց վրա ներգործում է շրջապատի մթնոլորտը, ներգործում է մանր-բուրժուական շրջապատը, մանավանդ վոր պետությունից «հեռու» յեն, իսկ կուլակազմակերպությունների ներսում պետական պարտավորությունները կատարել չցանկացող մարդկանց դեմ պայքարելու ուղղությամբ բավականաչափ միջոցներ չէյին գործադրվում:

Այդ նշանակում է, վոր հացամթերումը, վորպես պետական պարտավորություն, չի վերածվում դաստիարակման միջոցի, խորհրդային իշխանությունը նվիրված մարդկանց համախմբելու միջոցի, կուլակի դեմ պայքարելու միջոցի, այլ, ընդհակառակը, դարձվում է կազմալուծման միջոց, կոլտնտեսությունը պրոլետարական պետությունը հակադրելու միջոց: Ստացվում է չհրապարակված, չգրված մի համաձայնություն, մի տեսակ բլոկ մեկ կողմից նրանց միջև, ովքեր առհասարակ դեմ են հացամթերումներին, և մյուս կողմից նրանց միջև, ովքեր հացամթերումներին կողմնակից են, բայց թողնում են յերկրորդ, յերրորդ, չորրորդ պլանի վրա:

Անհրաժեշտ է, վոր բոլոր շրջկոմներն ու մարզկոմները հաշվի առնեն հացամթերումների դասերը, վորովհետև այս տարվա հացամթերումներն ըստ էյուլթյան նշանակում են մի ամբողջ ետապ կոլ-

տնտեսութիւնները սոցիալիստական բովանդակութեան և եյության, մեր գյուղական կուսակազմակերպութեան ամրացման, բոլոր ՄՏԿ-ներն ու խորհրդային տնտեսութիւնները լիովին տնտեսական և քաղաքական դեկաւարութեան իսկական լծակներ դարձնելու համար պայքարելու գործում: Հենց դրա համար էլ ստեղծվում են քաղաքականները:

ՔԱՂԱՓԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ՄՏԿ-ների և խորհրդային տնտեսութիւնների քաղաքականների նպատակի ու խնդիրների վերաբերյալ՝ պլենումին առաջարկված վորոշման իսկ իմաստից յերևում է, վոր քաղաքականների առաջ կանգնած խնդիրներն ըստ եյության գյուղի վորջ կուսաշխատանքի հերթական խնդիրներն են հանդիսանում, վորովհետև խոսքը միայն ՄՏԿ-ներին և խորհրդային տնտեսութիւններին չի վերաբերում: Խոսքը, առաջին, գյուղատնտեսութեան ղեկավարութիւնը բարելավելու մասին է. խոսքը, յերկրորդ, կոլտնտեսականների լայն մասսաների սոցիալիստական դաստիարակութեան խնդիրները պատշաճ բարձրութեան վրա դնելու մասին է. խոսքը, յերրորդ, մեր գյուղական կուսակազմակերպութիւնները սխալներն ու թերութիւններն ուղղելու մասին է:

Ընկ. Մ ա ա լ ի ն ը դ ե ո 1929 թվի վերջում մատնանշել է, վոր «սխալ կլիներ կարծել, թե քանի վոր կան կոլտնտեսութիւնները, ապա կա այն ամենն, ինչ անհրաժեշտ է սոցիալիզմի կառուցման համար: Առավել ևս սխալ կլիներ կարծել, թե կոլտնտեսութիւնների անդամներն արդեն սոցիալիստների յեն վերածվել: Վոչ, հարկավոր է դեռ շատ աշխատել գյուղացի կոլտնտեսականին վերափոխելու, նրա ինդիվիդուալիստական հոգեբանութիւնն ուղղելու և նրանից սոցիալիստական հասարակութեան իսկական աշխատավոր պատրաստելու համար: Յեւ այդ կարվի այնքան շուտ, վորքան շուտ կոլտնտեսութիւնները մեքենայացվեն, վորքան շուտ նրանք տրակտորիզացիայի յենթարկվեն: Բայց այդ ամենին չի պակասեցնի կոլտնտեսութիւնների՝ իբրև գյուղի սոցիալիստական վերափոխութեան լծակ՝ մեծագույն նշանակութիւնը: Կոլտնտեսութիւնների մեծ նշանակութիւնը հենց նրանումն է կայանում, վոր նրանք հիմնական պատվանդան են հանդիսանում մեքենաները և տրակտորները հողագործութեան մեջ կիրպոնելու համար, վոր նրանք հիմնական պատվանդան են կազմում գյուղացուն վերակառուցելու համար, նրա հոգեբանութիւնը պրոլետարական սոցիալիզմի վորով վերամշակելու համար»:

1929 թվից հետո անցած ժամանակում կուսակցութիւնը մեծ աշխատանք է կատարել կոլտնտեսութիւնները մեքենայացնելու, տրակտորիզացիայի յենթարկելու ուղղութեամբ: Յեթե 1928 թվին մենք գյուղում ունեյինք 26733 տրակտոր, ապա այժմ ունենք 147,800 տրակտոր, 1928 թվի սկզբին կար 1 ՄՏԿ, այժմ 2466: 4 տարում պրոլետարական պետութիւնը գյուղ է ուղարկել 1 միլիարդ 600

միլիոն ուղղութեամբ մեքենաներ, վորոնք գյուղատնտեսութեան մեքենայական ղինվածութիւնը 1928 թվի համեմատութեամբ կրկնապատկել են: Այդ տարիներում ստեղծված են հացահատիկային, անասնապահական և տեխնիկական կուլտուրաների խոշորագույն խորհրդային տնտեսութիւններ: ՄՏԿ-ները և խորհրդային տնտեսութիւնները գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման հիմնական լծակներն են հանդիսանում: ՄՏԿ-ները և խորհրդային տնտեսութիւններն արդեն իսկ խոշոր սոցիալիստական հողագործութեան կազմակերպիչների կարևորագույն դերն են խաղում:

Իհարկէ, այստեղ ևս մեր առաջ տակավին կանգնած են վիթխարի խնդիրներ: Քաշող ուժի հետ կապված դժվարութիւնները դեռևս գոյութիւն ունեն: Մեքենաները տակավին չեն բավականացնում. Յեւ այդ տեսակետից մենք չենք կարող հանգստանալ: Մեր առաջ ծանացած են վիթխարի խնդիրներ՝ հատկապես ՄՏԿ-ներում ու խորհրդային տնտեսութիւններում մեքենաների ոգտագործում և ճիշտ տնտեսավարում կազմակերպելու գործում:

Սակայն այս թվերը յես բերում են, վորպեսզի ցույց տամ, վոր մեքենայացման, տրակտորիզացիայի խնդիրներն զգալի չափով առաջ են շարժված: Բայց յեթե նայենք այն խնդրի յերկրորդ մասի վրա, վորն ընկ. Մ ա ա լ ի ն ը դ ե ո 1929 թվին, այն և՛ «աշխատել՝ գյուղացի կոլտնտեսականին վերափոխելու, նրա ինդիվիդուալիստական հոգեբանութիւնն ուղղելու և նրանից սոցիալիստական հասարակութեան իսկական աշխատավոր պատրաստելու համար», — այդ խնդիրը տակավին շատ վատ է կատարվում:

Յեթե արդյունաբերութեան մեջ մասսաների քաղաքական դաստիարակութեան և վերելքի պրոցեսը համընթաց է յեղել մեր նոր տեխնիկային, — դա հատկապես յերևում է սոց. մրցակցութիւնների և հարվածայնութեան որինակների վրա, — ապա գյուղում մենք խիստ հետ ենք մնացել:

Մենք պետք է ուղղակի ասենք, վոր ՄՏԿ-ների և խորհրդային տնտեսութիւնների քաղաքական դերը վոչ մի չափով չի համապատասխանում նրանց տնտեսական դերին: ՄՏԿ-ն, որինակի համար, հաճախ յուրատեսակ վարձակայանի դեր է կատարում: Խորհրդային տնտեսութիւնները և ՄՏԿ-ները շատ վատ են կատարում պրոլետարական պետութեան շահերի համար պայքարող մարտիկների իրենց դերը: Դեռ ավելին. մենք ունեցել ենք մի շարք փաստեր, յերբ խորհրդային տնտեսութիւնները և ՄՏԿ-ների աշխատողները վոչ միայն պատասխանատուութիւն չեն զգում ցանքի, հացամթերման, հերկի վորակի, ցանքի պլանը կատարելու խնդրում, այլև փաստորեն գերի յեն դառնում բուրժուա-կուլակային վերասերական տարրերի ձեռքը և նրանց հետ միասին իրենց հակադրում են պրոլետարական պետութեան շահերին:

Յերբ մենք խոսում ենք գյուղի աշխատանքների թերութիւն-

ների մասին, ապա այդ վերաբերում եւ վոչ միայն ՄՏԿ-ների և խորհրտնտեսութունների առանձին, պատահաբար տուգանված դիրեկտորների, այդ տեղի յե ունենում շնորհիվ մեր գյուղական կուսակցական և կոմյերիտական կազմակերպութունների զգալի մասի թուլության, և վոչ միայն գյուղական կազմակերպութունների, այլև շրջանային ու նույնիսկ մարզային կուսակցական կոմիտեների կողմից նրանց ցույց տրվող ղեկավարության թուլության:

Գյուղի կուսակցական կազմակերպութունները վոչ միայն իրենց ազդեցությամբ չեն ընդգրկում կոլտնտեսության բոլոր տնտեսական պրոցեսները, այլև հաճախ չեն կարողանում հարկ յեղածին պե՛ս ծավալել կոմունիստի համար ասես թե ամենատարրական՝ բացատրական աշխատանքը մասսաների մեջ, մասսաների առաջ մերկացնել կուլակի արարքները, կոնկրետ որինակների հիման վրա կարողանալ ցույց տալ, վոր բոլոր այդ կուլակները, բոլոր այդ հակախորհրդային, հակակոլտնտեսական տարրերը հետապնդում են աշխատավորներին ստրկացնելու և, ինչպես ասված է ԿԿ-ի վորոշման մեջ, «աշխատավորության և գյուղացիության վրա կալվածատերերի և կուլակների իշխանութունը վերականգնելու, բանվորների վրա Ֆարքիկանտների և գործարանատերերի իշխանութունը վերականգնելու» նպատակը: Գյուղական կոմունիստների մի մասը վոչ միայն չի կարողանում պայքարել այդ տարրերի դեմ, այլև իրենք են ընկել նրանց ազդեցության տակ: Կոմունիստների զգալի մասը նվիրված է կուսակցության և հեղափոխության գործին, բայց քիչ է դաստիարակված, և զրա հետեւանքով նրա մոտ բացակայում է բավականաչափ հեղափոխական աշխրջությունը: Նույնիսկ շրջանային և մարզային աշխատողների մեջ մենք կարող ենք հանդիպել մարդկանց, վորոնք կարծում են, թե կոլտնտեսութունները սոցիալիստական կազմակերպության այնպիսի ավարտված մի ձև են հանդիսանում, վորը չինական պարսպով բաժանված է մնացած ամեն ինչից: Իս ամենախոր սխալ է: Անգամ այնպիսի կազմակերպութուն, ինչպիսին է բայրախիյան բլիշը, վորն ունի իր ծրագիրը, պարզ և հստակ իդեոլոգիա, յերկաթյա կարգապահութուն, վորը կազմված է առաջավոր դասակարգի առաջավոր մարդկանցից, նա անգամ չինական պարսպով բաժանված չէ շրջապատի մանր-բուրժուական միջավայրից, նրա մեջ ևս յերբեմն առանձին տարրերը յենթարկվում են խորթ միջավայրի ազդեցությանը: Ամբողջ հարցն այն է, վոր մենք այդ մանր-բուրժուական ազդեցությանը, այդ յեթե կարելի յե այսպես արտահայտվել, մանր-բուրժուական բացիլներին հակադրենք մեր հակաբացիլները, մեր պատվաստը, մեր զրահը: Իսկ զրա համար հարկավոր է կոփում, կոփում և դարձյալ կոփում: Կոլտնտեսականների մասսան արդեն հաստատ համոզված է կոլտնտեսության ոգտավետությանն ու կենսունակությանը, նա մեր կողմից է, բայց այնտեղ, վորտեղ ղեկավարները, կոմունիստները, բավակառնաչափ չեն պայքարում նրանց ամրացման համար, չեն պայքար-

ում դասակարգային թշնամու դեմ, չեն պայքարում կուլակային իդեոլոգիայի մնացորդների դեմ, չեն պայքարում մանր-բուրժուական սովորությունների դեմ, այնտեղ սկսում են խաբել պրոլետարական պետությանը, իրենց շահերը հակադրել պետության շահերին: Վորպեսզի ձևի և եյության միջև մկրատ չլինի, տարբաժանում չլինի, զրա համար հարկավոր է բայրախիկորեն դաստիարակել կոլտնտեսութունները և կոլտնտեսականներին: Իսկ այդ նշանակում է կարողանալ տեսնել թշնամուն, մերկացնել նրան մասսաների առաջ, վտարել նրան կոլտնտեսութուններից և խորհրտնտեսութուններից, ճիշտ քաղաքական աշխատանքի հիման վրա համախմբելով կոլտնտեսական մասսաներին կուսակցական բլիշի շուրջը:

Շատերը սխալ են հասկանում կոլտնտեսութուններն ու կոլտնտեսականներին բլիշի շուրջը համախմբելու խնդիրը: Նրանք կանգնում են ձևական ճանապարհի վրա: Յերբեմն հավաքում են կոլտնտեսականներին, նրանց առաջ հարցեր են դնում, առանց ուշադրությունը սրելու ինչպես իրենց, այնպես էլ կոլտնտեսականների թերությունների վրա աշխարհագրապահության համար, հողի լավագույն մշակման համար մղվող պայքարում: Արտաքուստ, ձևականորեն նրանց մոտ այնպես է ստացվում, թե կոլտնտեսութունը գնում է բլիշի հետևից, բլիշը նրան ղեկավարում է, իսկ գործնականում վոչ մի ղեկավարություն չկա, գործնականում ղեկավարության փոխարեն ախրապետում է տարերքը: Բլիշը հոսանքի հետ լողում է, փոխանակ պայքարելու կոլտնտեսութունը քայքայող տարրերի դեմ, փոխանակ պայքարելու կոլտնտեսական գույքը հափշտակողների դեմ:

Ահա թե ինչու ԿԿ-ի վորոշումը խնդիր է դնում նվաճել մեծամասնութունը կոլտնտեսութուններում և խորհրտնտեսութուններում, նվաճել վոչ թե ֆիկտիվ, ձևականորեն, այլ ըստ եյության, նվաճել այնպիսի մեծամասնութուն, վորը բոլոր և ամեն տեսակ պայմաններում պայքարի կոլտնտեսության համար, պայքարի նրա առողջացման համար, նրա ամրացման համար, պայքարի այն հակախորհրդային տարրերի դեմ, վորոնք փորձում են կոլտնտեսութունը հակադրել պրոլետարական պետությանը, պայքարի պետության հանդեպ ունեցած բոլոր պարտավորությունների կատարման համար:

Պարզ է, իհարկե, վոր բոլոր այս խնդիրների կատարումը գյուղում պահանջում է լարել մեր ուժերը: Մեր գյուղական կազմակերպութուններն աճել են: Մենք ունենք ահադին քանակությամբ հիանալի մարդիկ կոլտնտեսականներից, բայց նրանց պետք է կազմակերպել, նրանց պետք է լուսավորել, նրանց պետք է համախմբել: Փորձը ցույց է տվել, վոր ներկա դրությամբ գլուխ բերել այս խնդիրները՝ միայն գյուղի տեղական կազմակերպութունների միջոցով՝ շատ դժվար է:

Ահա թե ինչու, հաշի տանելով այս ամենը, ընկ. Ստալինն առաջարկ մտցրեց ԿԿ՝ ՄՏԿ-ների և խորհրտնտեսութունների քաղաք-

ժիններ կազմակերպելու մասին, ՄՏԿ-ների և խորհրդակցությունների աշխատանքը բարելավելու, նրանց քաղաքականապես ամրացնելու, տնտեսական աշխատանքը, մասսաների մեջ կատարվող աշխատանքը բարելավելու, կուսակցական բջիջների աշխատանքը բարելավելու համար:

ՄՏԿ-ՆԵՐԻ, ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՍՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՍՈՒԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մեր աշխատողների զգալի մի մասը գյուղի կուսկազմակերպությունների աշխատանքը դիտել և նեղ սահմանների մեջ, չմտցնելով այդ խնդիրների մեջ տնտեսավարման պրոցեսի անմիջական ղեկավարությունը: Իր ժամանակին դա վորոջ չափով ըզլիսել և գյուղում տիրող այն դրությունից, յերբ տեր եր հանդիսանում առանձին մենատնտեսը, յերբ վոչ միայն կուսակցական, այլ նույնիսկ խորհրդային կազմակերպություններն ստիպված եյին բավականանալ լոկ վորոջ սխտեմատիկ ցուցումներ տալով ագրոտեխնիկայի և այլ բնագավառներում: Պարզ և, իհարկե, վոր այժմ, յերբ մենք ահագին քանակությամբ խորհրդակցություններ ունենք և յերբ գյուղացիությունն հիմնական մասսան համախմբված և կոլտնտեսություններում, յերբ մենատնտեսի փոխարեն հանդես և գալիս ամբողջ կոլտնտեսությունը, գյուղի կուսաշխատանքի խնդիրներն անապաման իրենց մեջ պարունակում են նաև գյուղատնտեսական աշխատանքների պատշաճ կազմակերպումը:

Իհարկե, մեզ մոտ գոյություն ունի աշխատանքի բաժանում: Տնտեսական որդանները, սկսած Հողօրդկոմատից և Խորհրդատվորմատից մինչև ՄՏԿ-ի դիրեկտորը, խորհրդակցության դիրեկտորը և կոլտնտեսություն նախագահը, անմիջաբար, կոնկրետ ձևով, ամեն որ պետք և կառավարեն վորջ տնտեսական պրոցեսը: Սակայն սխալ կլինեք այդ աշխատանքի բաժանումը լոկ մեխանիկորեն հասկանալ: Մենք, բայց ինչպե՞ս, միշտ յեկել ենք այն բանից, վոր տնտեսությունը, եկոնոմիկական կապված են քաղաքական աշխատանքի հետ: Այդ հասկանում և նաև դասակարգային թշնամին, յերբ նա կազմակերպում եր և կազմակերպում և տեխնիկական ֆասսարարություն: Յեկ այժմ ավելի քան յերբեկից գյուղում տնտեսավարումը խորհրդակցություններում, ՄՏԿ-ներում և կոլտնտեսություններում կապվում և քաղաքականությունն և քաղաքական աշխատանքի հետ: Ահա թե ինչու՞, վորոչման նախագծի մեջ ընդգծելով միանձնյա ղեկավարություն անխախտությունը ՄՏԿ-ներում և խորհրդակցություններում, ԿԿ-ն միաժամանակ քաղաքականներին խնդիր և առաջադրում՝ իրենց վորջ մասսայական քաղաքական աշխատանքով լրացնեն ՄՏԿ-ների և խորհրդակցությունների տնտեսական ու տեխնիկական աշխատանքը: Այդ նշանակում և, վոր քաղաքականները պետք և ապահովեն կուսակցական աչքն ու վերահսկո-

ղությունը «ինչպես ՄՏԿ-ների, այնպես և նրանց սպասարկած կոլտնտեսությունների տնտեսությունն և կյանքի բոլոր բնագավառներում»:

Մենք այժմ ՄՏԿ-ների քաղաքականների և դիրեկտորների փոխհարաբերությունների որենսգիրք չենք կազմի: Այդ փոխհարաբերությունները կազմվելու յեն աշխատանքի պրոցեսում, կոլտնտեսությունների ամրացման համար պայքարելու պրոցեսում: Հավ բայց ինչպե՞ս, վորոնք հարցին չեն մոտենում ձևականորեն, բյուրոկրատի պես, — միշտ ևլ ընդհանուր լեզու կգտնեն. միշտ ևլ իրար հետ համաձայնություն կզան իրենց առաջ ծառայած բարդագույն խնդիրները լուծելու գործում:

Քաղաքականների խնդիրները բացառիկ կարևոր ու մեծ են վոչ միայն կուսակցական և քաղաքական աշխատանքի բնագավառում, այլև տնտեսավարման բնագավառում: Կարողանալ քաղաքական մոտեցրում ունենալ յուրաքանչյուր տնտեսական պրոցեսին, կարողանալ բաց անել այս կամ այն տնտեսական աշխատանքի անպետքությունը՝ կապված կուլակի գործողությունների կամ անջանասիրություն, հանրային գույքին, կոլտնտեսական տնտեսությունը հանցագործ վերաբերմունք ցույց տալու հետ, — դա քաղաքականների կարևորագույն խնդիրն և:

Վերցնենք տեխնիկական գյուղատնտեսական աշխատանքների և քաղաքական աշխատանքի փոխադարձ ներհարկման մի շարք կոնկրետ որինակներ: Որինակ՝ հերկի ժամանակ: Առաջին հայացքից թվում և, թե դա զուտ տեխնիկական, տնտեսական պրոցես և: Սակայն ինչպես են վարում՝ խորը, թե նոսր, մաքուր վար են անում, թե ինչպե՞ս են յերբեք են թողնում, — դա մի հարց և, վորը, ինչպես փորձն և բաց տեղեր են թողնում, — դա մի հարց և, վորը, ինչպե՞ս փորձն և ցույց տվել, խիստ քաղաքական և: Մենք կոնկրետ որինակների հիման վերաբերմունք և ցույց տալիս վարին, չեն գնահատում հանրային տնտեսությունը, — իրենց փոխարեն ստիպում են գուլթանի հետևից քայլել 12 տարեկաններին, վորոնք չեն ապահովում լավ վարը, գուլթանը վոստոստում և, փոխանակ խորը վարելու՝ հողի յերեսին պար և գալիս: Տեսնում եք, ինչպե՞ս հերկի հարցը տեղումտեղը շողկապ վում և մասսայական-քաղաքական աշխատանքի հետ, աշխատանքի հանդեպ մանր-սեփականատիրական վերաբերմունքը հաղթահարելու խնդրի, աշխատանքային յանությունն և այլ խնդիրների հետ:

Կամ վերցնենք սերմացուի որինակը: Կարելի յե չգտված սերմ ցանել: Դրանից ֆլաս կհասնի թե խորհրդակցությանը և թե կոլտնտեսությունը: Գործի ոգտակարություն համար հարկավոր և խնամքով գտել, տրիբրով անցկացնել սերմացուն, ստուգել նրա աճունակությունը, — դրանից և կախված բերքատվությունը: Հաճախակի յեն դեպ-

քերը, յերբ ցանելու նորմաները չեն կատարվում, յերբ ցանողին տալիս են ցանելու 7-8 փուլ, բայց նա ցանում է 4 փուլ, իսկ մնացածը դողանում է, դրանով իսկ պատժելով կոլտնտեսությունը և պետությունը վոչ թե 3-4 փթով, այլ բերքատվություն 30-40 փթի պակասեցումով:

Յես արդեն խոսեցի կուլակի կողմից հացամթերումը սարսափելի խնթարկելու մասին: Բայց կուլակը սարսափ է կազմակերպում վոչ պարզապես, վոչ բացահայտ կերպով, այլ այնպես, վոր հասարակ աչքով իսկույն ևեթ չես նկատի: Շատերն, որինակի համար, մինչև վերջերս գտնում էին, թե հաշվապահը և հաշվետու-հաշվետարը շատ կարևոր են միմիայն տեխնիկական հաշվետվություն տեսակետից, առանց վորի դժվար է տնտեսությունը վարել: Բայց վերջին տարվա հացամթերման փորձը ցույց տվեց, վոր առաջին հայացքից զուտ տեխնիկական աշխատանքը — վիճակագրական հաշվառումը և հաշվապահությունը — մի շարք կոլտնտեսություններում դասակարգային թշնամին քաղաքական սուր դեմքի յե վերածել ընդդեմ կոլտնտեսություն, ընդդեմ պրոլետարական պետություն: Հաշվառումը սխալ են վարում, հաշվապահը համաձայնություն է գալիս կռողի հետ, կռողը 300 փուլ է կռում, 200 փթի յե անդորրագիր տալիս և ուղարկում հաշվապահին, վերջինս էլ գրանցում է 200 փուլ: Իսկ մեր վոչ միայն գյուղական, այլև շրջանային, յերբեմն նույնիսկ մարզային կոմունիստներին շատերը պարզամտորեն կրկնում են՝ «բերքատվությունը ցածր է, բերքատվությունը ցածր է» և իրենց նեղություն չեն տալիս անձամբ ստուգելու, վոր հաճախ այդ ցածր բերքատվությունը կեղծ և ֆրաստարարական յեղանակով հաշվապահն է ցույց տվել իր հաշվետվության մեջ:

Կամ վերցնենք հացահատիկի կարման որինակը: Մի կոլտնտեսությունում ինձ գանգատվում էին, թե կարծիք վատ է աշխատում, ուրիշն է հարկավոր: Այդ ասում եր կուսակցական բժիշկի քարտուղարը: Իսկ յերբ մենք սկսեցինք գործը պարզել, ապա բանից դուրս յեկավ, վոր կարծիք 32 ատամը պակաս է, կուլակը գիտակցարար կտորտել է: Բժիշկի քարտուղարին հաղորդել են, թե «կարծիք վատ է աշխատում», նա էլ այդ խոսքերը կրկնում է, մատնանշելով որյեկտիվ տեխնիկական պատճառի վրա, իսկ իրականություն մեջ այդտեղ պատճառը քաղաքական էր, վորը կոմունիստը չեր կարողացել տեսնել: Կամ թե մադն են փոխում. լավ տեսակը քիչ է լինում, իսկ այսպես կոչված յերկրորդ տեսակը և տականքը կազմում են ամբողջ կեսը: Բժիշկի քարտուղարը թուլակի պես կրկնում է՝ «բերքը լավ չէ», իսկ իրականություն մեջ այստեղ չարամտորեն փոխել են մադը, վոր յերկրորդ տեսակն ու տականքն ավելի շատ լինի, վորպեսզի խաբեն կոլտնտեսականներին և պետությունը:

Տեղական շատ աշխատողներ պատրաստ են իրենց անտեսական դժվարություններն ու անկանոնություններն «որյեկտիվ» պատճառ-

ների վերադրել: Բայց հարցը նրանումն է, թե ինչպես հասկանալ որյեկտիվ պատճառները: Վոմանք, որինակի համար, պատրաստ են իրենց սուբյեկտիվ թուլությունը ծածկել ընդհանուր դատողություններ անելով այն մասին, թե դասակարգային թշնամին է մեղավոր, համարելով այդ որյեկտիվ գործոն: Բայց չէ վոր հենց դասակարգային թշնամու դեմ գոյություն ունի սուբյեկտիվ գործոն՝ մեր դասակարգային ուժը, մեր հեղափոխական աշխրջությունը: Յեթե այդ աշխատողները ցուցաբերյին իրենց հեղափոխական աշխրջությունը, դասակարգային թշնամին հնարավորություն չեր ունենա մեզ այնքան ֆրաս հասցնել, փչացնել, վսրքան նա հնարավորություն ունի այն դեպքում, յերբ չկա աշխրջություն, յերբ պոկոշները փոխանակ պայքարելու՝ շատախոսություն են զբաղվում:

Քաղաքայինները բոլոր անտեսական աշխատանքներին պետք է մոտենան քաղաքական տեսակետից, պետք է կոմունիստներին այնպես դաստիարակեն, վոր նրանք աշխրջ լինեն աշխատանքի յուրաքանչյուր բնագավառում, վոր նրանք խուսքով չհավատան, վոր նրանք թափանցեն հարցի եյություն մեջ, վոր նրանք սովորեն մերկացնել թե հաշվապահական մատյանների կեղծ գրանցումները և թե այն մարդկանց, վորոնք գիտակցարար կտորտում են կարծիք ատամները, գտնել և պատժել, ցանցառ ցանքը կանխել, ցանելու նորման պակասով և այլն:

Այդ հատկապես վերաբերում է այնպիսի մի գործի, ինչպիսին տրակտորային տնտեսությունն է ու գյուղատնտեսական մեքենաները: Պրոլետարական պետությունն անագին քանակություն տրակտորներ և գյուղատնտեսական մեքենաներ է տվել: Դա մեր մեծագույն անտեսական և քաղաքական նվաճումն է: Բայց այդ նվաճումը՝ մեքենաները վոչ-ճիշտ խնամելու, մասերը ջարդելու, տրակտորներին բարբարոս վերաբերմունք ցույց տալու դեպքում, կարելի յե ողջնդեցնել: Առաջին հայացքից կարող է թվալ, թե տրակտորի հետ վարվելը զուտ տեխնիկական գործ է, թե այստեղ պետք է գործի ինժեները կամ մեխանիկը: Իրականություն մեջ տասնյակ հազարավոր դեպքեր կան, յերբ տրակտորները ջարդում են, առաջին, նրան տիրապետել չկարողանալու հետևանքով, վորից բխում է տրակտորիստների պատրաստման ու վերապատրաստման, նրանց վորակավորման բարձրացման խնդիրը:

Յերկրորդ, տրակտորների նկատմամբ անուշադիր, անփուլթ, թափթփված, լողրային վերաբերմունք ունենալու պատճառով: Ահա, որինակի համար, «Գիզանտ» խորհատնտեսություն բաժանմունքներից մեկում յես անձամբ առիթ ունեցա գանգատ լսելու այն մասին, թե մի շարք տրակտորների ռադիատորները ձաքել են: Յերբ սկսեցինք հարցաքննել, թե ինչու յեն ձաքել, ապա պարզվեց, վոր աշխատանքից հետո ջուրը բաց չեն թողել, սառնամանիքը ավել է, և ձաքել են: Բաժանմունքի վարիչը փոխանակ արհեստակցական

և կուսակցական կազմակերպութիւնները հետ միասին մեղա-
վորներին պատժելու, տրակտորիստները ուշադրութիւնը, աչա-
լըջութիւնը մոբիլիզացիայի յենթարկելու, հարվածայնութիւնը
բարձրացնելու, արձանագրում ե ջարդվածքը, դա սովորական բան ե
համարում ե վոչ մի միջոցի չի ձեռնարկում: Պարզ ե, իհարկե, վոր
այստեղ ճաքած ռազիատորներն արդոււնք են վոչ թե ինչ-վոր տեխ-
նիկական անկանոնութիւն, այլ քաղաքական ղեկավարութիւն ե
տնտեսական աշխատանքի թույլ անպետք դրվածքի:

Յերրորդ, պատահում ե, վոր տրակտորները ե մյուս գյուղատնտե-
սական մեքենաները գիտակցաբար ջարդում են խորհանտեսութիւն-
ներ ե կոլտնտեսութիւններ խցկված կուլակները: Կուլակը խցկվում
ե խորհանտեսութիւն ե կոլտնտեսութիւն, ֆլասում ե, իսկ կուսակ-
ցական կազմակերպութիւնը ե տնտեսական ղեկավարն այդ չեն տես-
նում, հեղափոխական աշալըջութիւնը նրանց մոտ տակալվին քիչ ե:

Վնասարարական աշխատանքը հաճախ հեշտանում ե մեր տնտե-
սական մարմինների աղաղակող անտնտեսավարութիւնը, մարմիններ,
վորոնք տրակտորների ճիշտ հաշվառում չունեն, խոսքով հավատում
են պահեստի մասերի՝ իրենց ներկայացվող հայտերին ե չեն վորձում
թեկուզ ե տեղում ընտրութիւն անել, ստուգել այդ հայտերը, չեն
մտածում տրակտորների ե տրակտորային գործիքների խտանման
գործն ավելի լավ կազմակերպելու, տրակտորային արհեստանոցներ
կազմակերպելու ե այլ խնդիրների ուղղութիւնը:

Վնասարարութիւնը բացվել ե վոչ միայն ՄՏԿ-ներում, կոլ-
տնտեսութիւններում ե խորհանտեսութիւններում: Վնասարարներն
իրենց խնդիր են առաջադրել գիտակցաբար, կազմակերպված ձևով
քանգել մեր գյուղատնտեսութիւնը՝ վատ հերկել, վատ ցանել, տրակ-
տորները ջարդել, պահեստի մասերն ուղարկել վոչ այնտեղ, ուր
հարկավոր ե. այս-ինչ մասերն են հարկավոր, ուրիշ մասեր են ուղար-
կում: Իհարկե նրանք ավելի լայն քաղաքական ընույթի՝ կապիտա-
լիզմի վերականգնման նպատակն եյին հետապնդում: Վնասարարու-
թիւն ղեմ մենք պայքարում ենք զանազան ճանապարհներով, Միացյալ
Պետքաղվարչութիւն մեթոդներով, մեր կաղերին դաստիարակելու
ճանապարհով, ինչպես մենք այդ արինք Շախտիի դատավարութիւն-
նից հետո, մեր վորջ տնտեսական ե քաղաքական աշխատանքը բա-
րելավելու ճանապարհով, հեղափոխական աշալըջութիւնն ու գյուղա-
տնտեսութիւն կոնկրետ ղեկավարութիւնն ուժեղացնելով: Չի կարելի
ֆնասարարութիւնը գիտել իբրև ինչ-վոր ճակատագրականորեն ան-
խուսափելի բան: Մենք կարող ենք ե պետք ե արմատից կտրենք
ֆնասարարութիւնը բոլոր յեղանակներով, պրոլետարական ղեկտա-
տուրայի բոլոր միջոցներով, այդ թվում ե առաջին հերթին ուժե-
ղացնելով աշխատողների հեղափոխական աշալըջութիւնը ե լավաց-
նելով մեր աշխատանքի վորակը:

Ընկ. Ստալինը ճիշտ ընդգծեց վերջին տարիներում ստեղծված

200 հազար կոլտնտեսութիւնների, 5 հազար խորհանտեսութիւննե-
րի ե 2466 ՄՏԿ-ների տնտեսութիւնը տիրապետելու դժվարութիւն-
ները: Նա ընդգծեց, վոր մեր խորհանտեսութիւններն ու կոլտնտե-
սութիւններն այնպիսի մի շրջան են ապրում, վորը նման ե այն
շրջանին, վորպիսին ապրել են մեր գործարաններն ու ձեռնարկու-
թիւնները 1920—1921 թվականներին: Ընկ. Ստալինի այդ խոսքե-
րից մենք պետք ե անենք այն միակ բայլըկիւյան յեղբակացու-
թիւնը, թե պետք ե բոլոր ջանքերը գործ դնել ամենաարագ կերպով
յուրացնելու տնտեսութիւնը ե ուղղելու մեր սուբյեկտիվ թերու-
թիւնները: Ինչպես վոր մենք 1920—1921 թվականներից հետո մոբի-
լիզացիայի յենթարկեցինք մեր բոլոր ուժերը արդոււնաբերութիւն
աշխատանքի թերութիւնները հաղթահարելու համար, ինչպես վոր
մենք հաշվի առանք Շախտիի ֆնասարարութիւն դասերը մեր ձեռ-
նարկութիւնների աշխատանքը բարելավելու համար, այնպես ել
մենք պետք ե հաղթահարենք գյուղատնտեսութիւն մեջ գոյութիւն
ունեցող թերութիւնները:

Իսկ դրա համար հարկավոր ե մոբիլիզացիայի յենթարկել մաս-
սաներին, խորհանտեսութիւնների բանվորների ե կոլտնտեսական-
ների մեջ բարձրացնել սոցիւրցման ե հարվածայնութիւն այնպիսի ա-
լիք, վորպիսին մենք բարձրացրել ենք արդոււնաբերութիւն մեջ: Դա
քաղբաժինների կարևորագույն խնդիրներից մեկն ե հանդիսանում:

Մենք պետք ե ուղղակի ասենք, վոր գյուղատնտեսական աշ-
խատանքի հարցերում յեղած խոշորագույն թերութիւնների հաղթա-
հարման խնդիրը վերաբերում ե վոչ միայն ստորին որգաններին, այլև
մարզային, յերկրային որգաններին ե Հողժողկոմատին—Սորհանտ-
ժողկոմատին:

Հողժողկոմատն ու Սորհանտժողկոմատը ե նրանց տեղական որ-
գանները պետք ե շատ ավելի կոնկրետ ու ոպերատիվ ձևով զբաղվեն
տրակտորային պարկով, ցանքի ե ցանքի վորակի հարցերով, բերքա-
հավաքով, կալոււմով, կոմբայնների ե մյուս մեքենաների աշխատան-
քով: Անհրաժեշտ ե՝ աչելի շերտավորված մոտեցում ունենալ յուրա-
քանչյուր մարդին ե առանձին յերկրին:

Յեթե կոնկրետ խոսենք Հողժողկոմատի որգանների մասին, սկսած
շրջանային հողբաժիններից, ապա յես պետք ե ասեմ, վոր շրջանային
հողբաժինները մեզ մոտ շատ շրջաններում փաստորեն չկան, դրանք
թույլ, վտիտ որգաններ են: Այնտեղ նստած ազրոնսմն ամբողջապես
թղթերի մեջ ե թաղված ե ըստ եյութիւն գյուղատնտեսութիւնը չի
զբաղվում: Շրջանային հողբաժիններում հոսունութիւնն անհավատա-
լի չափերի յե հասել: Շրջանային հողբաժինները պետք ե ամբացնել
ուժեղ աշխատողներով ե նրանց տեղից տեղ չքաշքշել: Հարկավոր ե հի-
շել, վոր կուսկազմակերպութիւնները նույնպես պատասխանատու յեն
շրջանային հողբաժինների աշխատանքի ե նրանց մարդկանց ընտրու-

թյան համար: Մարզային և յերկրային հողվարչությունները նույնպես թույլ են ղեկավարում գյուղատնտեսությունը:

Կենտրոնում ևս, Մոսկվայում, յեթե վերցնենք Հողփողկոմատի և Սորհատնտնտեսության, տրակտորկենտրոնի, խորհատնտնտեսության վարչությունները, ապա այստեղ ևս կան մի շարք խոշորագույն թերություններ, վորը Հողփողկոմատի և Սորհատնտնտեսության աշխատողներն առաջին հերթին պետք է ինչքան կարելի յե շուտ գիտակցեն և վերացնեն: Բավական է բերել այսպիսի մի սրինակ: Յերբ հարց դրվեց խորհատնտնտեսություններին մասցու մատակարարել խոշոր արդյունաբերական կենտրոնների բանվորներին և յերբ ընկ. Մտալինը պահանջեց՝ մեզ մի հրամցնեք ընդհանուր տոկոսներ, վոչնչի չպարտավորեցնող «ընդհանուր» վերացական պլաններ, այլ կոնկրետ խորհատնտնտեսություններ ամրացրեք Լենինգրադին, Մոսկվային, Դոնբասին, վորպեսզի մենք գիտենանք, թե վոր խորհատնտնտեսությունից ինչ պահանջներ, — Հողփողկոմատը չկարողացավ մսի հանձնման պլան տալ յուրաքանչյուր խորհատնտնտեսության գծով:

Մտալին: Ժողկոմատը չգիտեր, թե ինչ կարող է տալ յուրաքանչյուր խորհատնտնտեսությունը:

Կազանովիչ: Այո, ժողկոմատը չգիտեր, թե ինչ կարող է տալ յուրաքանչյուր խորհատնտնտեսությունը: Յուրաքանչյուր խորհատնտնտեսության գծով մսի հանձնման պլաններ կազմելու համար հարկավոր յեղավ բոլոր տրեսների նախագահներին կանչել, վորոնք այստեղ, Մոսկվայում նստեցին յերկու շաբաթ, հեռագրերով լրացուցիչ կերպով հարցում արին իրենց տեղական որգաններին, վորովհետև տրեսների նախագահները ևս հարկ յեղածին պես չգիտեին իրենց խորհատնտնտեսությունները: Յեվ դրանից հետո միայն հաղիվ-հաղ կարողացանք ստանալ նրանցից կոնկրետ պլան ըստ խորհատնտնտեսությունների: Այդ նույնը վերաբերում է նաև տրակտորկենտրոնի կողմից ՄՏԿ-ները գիտենալուն, ինչպես և Հողփողկոմատի մյուս վարչություններին: Կոնկրետ, ոպերատիվ ղեկավարությունը շատ և շատ քիչ է: Հողփողկոմատը կանգ է առել իր աշխատանքների առաջին շրջանի վրա: Նա բավականաչափ ուժեղ շրջագարձ չի կատարել յուրաքանչյուր որվա, յուրաքանչյուր ժամվա կոնկրետ պրակտիկայի, ոպերատիվ ղեկավարության կողմը:

Այն, վոր Հողփողկոմատից անջատեցինք Սորհատնտնտեսության, — զա գգալի չափով կոզնի կոնկրետացնելու ՄՏԿ-ների և խորհատնտնտեսությունների ղեկավարման գործը: Հողփողկոմատը և Սորհատնտնտեսության վերաբերյալ արեւելյան վերակառուցեն իրենց աշխատանքը:

Մենք կկարողանանք կոլտնտեսություններում և խորհատնտնտեսություններում գործը լավ կազմակերպել, յեթե ամրացնենք կադրերը: Կադրեր մենք ունենք, նրանց պետք է ջոկել և կազմակերպել: Յես տեսել եմ հարյուրավոր տաղանդավոր մարդիկ կոլտնտեսականներից և խորհատնտնտեսությունների բանվորներից, վորոնք սովորել են կառա-

վարել: Կոլտնտեսություններում և խորհատնտնտեսություններում մենք ունենք հարյուր հազարավոր տաղանդավոր մարդիկ: Նրանց հարկավոր է գիտենալ, դաստիարակել և կազմակերպել:

Հողփողկոմատը, Սորհատնտնտեսության և նրանց տեղական որգանները հին գյուղատնտեսական որգաններից բացառիկ քիչ կադրեր են ստացել: Հին գյուղատնտեսական կադրերի զգալի մասն անպետք դուրս յեկավ նոր շրջանի համար: Հին գյուղատնտեսական կադրերի զգալի մասը մեծ մասամբ այնպիսի մարդիկ են, վորոնք գյուղատնտեսությանը բոլորովին այլ մտեցում ունենալու վոգով են դաստիարակվել, — մարդիկ, վորոնք համակված են յեղել կոնդրատյեվակա-նությամբ, թեև նրանցից շատերը զրպանում կուստոմս են ունեցել:

Սորհատնտնտեսությունների շատ դիրեկտորներ այժմ «դուրս են ընկել»: Մենք նրանց, այսպես ասած, «քել ենք»: Հարկավոր է ընտրել նորերի: Կարելի յե, իհարկե, մի մասին դրսից տալ, բայց հիմնական մասին պետք է ներսից առաջ քաշել: Յեվ Սորհատնտնտեսության խնդիրն է՝ աշխատողներին առաջ քաշել իր սխտեմի ներսից:

Պետք է վերացնել կադրերի խայտառակ հոսունությունը: Կի-իսպառատի հետագոտած 613 ՄՏԿ-ներում դիրեկտորների 60 տոկոսը մեկ տարուց պակաս է, ինչ աշխատում է: Նույնը նաև խորհատնտնտեսություններում: Պետք է ընտրել ամուր մարդկանց և նրանց ամրացնել աշխատանքին, իսկ վոր գլխավորն է՝ նրանց պետք է դաստիարակել աշխատանքի պրոցեսում:

Կուսակցությունը մեծ քանակությամբ մարդիկ է տվել գյուղատնտեսական ապարատներին: Մոտավոր կոպիտ հաշիվներով մենք ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերից և ուսումնական հիմնարկներից մոտ 50 հազար մարդ ենք տվել գյուղատնտեսական ապարատներին, կոլտնտեսություններին, ՄՏԿ-ներին և խորհատնտնտեսություններին:

Հնգամյակի ընթացքում մենք ունեցանք մասնագետների ընդհանուր թվի զգալի աճում գյուղատնտեսության մեջ: 1928 թվին գյուղատնտեսության մեջ հաշվվում էր 17,8 հազար մասնագետ, իսկ 1932 թվին՝ 69,3 հազար մասնագետ (աճում ավելի քան 4 անգամով):

Ագրոնոմներ թիվը հնգամյակում ավելացավ 2 անգամով — 7028 հոգուց 14200 հոգու, և լրիվ միջնակարգ կրթություն ունեցող ագրոտեխնիկների թիվը ավելացավ գրեթե 5 անգամով (3960-ից մինչև 19,500):

1928 թվին մենք ունեցինք 24 գյուղատնտեսական բուհ, 1932 թվին՝ 151. տեխնիկոմներ համապատասխան կերպ 1928 թվին՝ 25, 1932 թվին՝ 976: Սովորողների թիվը նույնպես արագորեն աճեց, այն է՝ 1928 թվին գյուղատնտեսական բուհերում կային 28000 հոգի, իսկ 1932 թվին՝ 61000 հոգի, գյուղատնտեսական տեխնիկոմներում 1928 թվին՝ 12000, իսկ 1932 թվին՝ 163.400:

Այդ նույն տարիներում զանազան դասընթացների միջոցով

վունքները, շահագործելու իրավունքները, մեկ մարդու կողմից մյուսի աշխատանքը յուրացնելու իրավունքները, ապա մեր դեկրետն ուղղված է պաշտպանելու նոր, սոցիալիստական կարգերը, վոչնչացնելու մարդու միջոցով մարդուն շահագործելու ամեն մի հնարավորություն:

Դասակարգային թշնամին վտանգություն կատարելով կոլտնտեսային և խորհրդային սեփականության հանդեպ, փորձում է քանդել սոցիալիստական կարգերի հիմքերը: Հացի, կոլտնտեսության անասունների, սերմացուի և այլ գոյությունները սովորական քրեական հանցագործություն չեն: Դա կոլտնտեսությունների դեմ ուղղված դասակարգային պայքարի մի ձև է, դա քաղաքական յելույթ է խորհրդային կարգերի հիմունքների դեմ: Յեվ մեր ձեռքը չի դողա հանրային սեփականությունը հափշտակողներին վոչնչացնելու համար:

Գյուղական մի ժողովում յես պատմեցի, վոր մի քանի կոլտնտեսականներ չեն ամաչում, յերբ նրանց մեղադրում են հանրային սեփականությունը հափշտակելու մեջ: Յեթե առաջ նրանցից մեկն ումեկին ասեյին, թե նա գողացել է, նա կվրդովվեր—«Այդ վոնց թե գողացել եմ: Յես ազնիվ մարդ եմ»: Նա գտնում էր, վոր մասնավոր սեփականությունը սրբազան է, «աստծուց ե»: Իսկ այժմ, յերբ ասում են՝ «դու գողացել ես», մի քանի կոլտնտեսականներ ի պատասխան ժպտում են և իրենց-իրենց մտածում. «Կեցցես, ճարպկորեն թոցրի, յես տնտեսվար գյուղացի յեմ, ձեռքս ինչ վոր ընկնի, ել դուրս չի պրծնի: Կոլտնտեսական բարիքը սրբազան չէ, «աստծուց չէ», «սատանայից ե»... Ի պատասխան քրքջում են, համաձայն են դրա հետ:

Ստալին: Վոչ միայն նրանք, այլև մեր աշխատողներից մի քանիսը:

Կազանովիչ: Միանգամայն ճիշտ է:

Հարկավոր է, վոր մեր բոլոր կոմունիստները հանրային բարիքին վերաբերվեն հեղափոխականի ամբողջ մղումով և պայքարեն հանրային գույքի բոլոր հափշտակիչների դեմ: Չե՞ վոր այն փաստը, վոր կոլտնտեսականը կոլտնտեսություն է մտել, նշանակում է, վոր նրա հասարակական կողմը վերակշռում է մասնավոր-սեփականատիրական կողմին: Կոլտնտեսությունը ճիշտ կազմակերպելով և գողերի ու ֆուսսարարների դեմ պայքարելով մենք զարգացնում ենք այդ հասարակական կողմը, իսկ այն կողմը, վորին կառչում է դասակարգային թշնամին, մասնավոր-սեփականատիրական, պոկոզական կողմը, մենք քարուքանդ ենք անում: Բայց քանի վոր տեղական կոմունիստներն այդ ուղղությունը գրեթե չեն աշխատում, իսկ դասակարգային թշնամին աշխատում է ուժգին թափով, ուստի նա կոլտնտեսականի վրա ազդեցություն է գործում, բռնում է նրա հենց այդ թույլ լարը, նրա սեփականատիրական հոգեբանությունը: Միայն կլիներ չափազանցել թշնամու հնարավորությունն ու ուժը, բայց չպետք է նաև նսեմացնել այն: Մենք պետք է ամենայն հստակությամբ տեսնենք մեր թուլությունները, վորպեսզի հաղթահարենք այն:

Հանրային սոցիալիստական սեփականության համար պետք է պայքարել պրոլետարական դիկտատուրայի բոլոր միջոցներով, վորոնք փոխադարձաբար կապված են միմյանց: Յեթե հետամնաց կոլտնտեսականների նկատմամբ, չհրաժարվելով հարկադրական միջոցներից, մենք գլխավորապես պետք է գործենք ամենորյա դաստիարակման, կոլտնտեսական ակտիվ աշխատանքի ներգրավելու մեթոդներով, ապա կուլակային տարրերին, կոլտնտեսության ու խորհրդային կոլտնտեսության բարիքի հափշտակում, ցանքի ու հացամթերման սարքատաժ կազմակերպողներին մենք պետք է անխնա մերկացնենք, արմատախիլ անենք սոցիալիստական սեփականության պաշտպանությունը վերաբերող խորհրդային որենքների ամբողջ խստությունը:

Հանրային սոցիալիստական սեփականության համար պայքարելը սերտորեն կապված է պետության առաջ հանձն առած պարտավորությունների կատարման համար պայքարելու հետ: Փորձը ցույց է տվել, վոր այնտեղ, վորտեղ կոլտնտեսությունները պայքարում են թշնամիների դեմ, վորտեղ կուլակային տարրերը մերկացված և արմատախիլ են արված,— այնտեղ ճշտապահորեն կատարվում են հացամթերման պլանները և ֆինանսական պարտավորությունները, այնտեղ կոլտնտեսությունների տնտեսությունը պատշաճ բարձրության վրա յե գտնվում և կոլտնտեսականները լիուլի հաց ու զգալի յեկամուտ են ստանում ըստ աշխուրների:

Ահա թե ինչու հակակուսակցական, հակախորհրդային են այն մարդկանց դատողությունները, վորոնք պետության առաջ հանձն առած պարտավորությունների կատարմանը հակադրում են կոլտնտեսության յեկամտարբերության բարձրացումը:

Կոլտնտեսականների մեջ կատարվող վողջ մասսայական քաղաքական աշխատանքներում անհրաժեշտ է ձգտել, վորպեսզի կոլտնտեսականները դիտակցեն, վոր վերոհիշյալ յերեք խնդիրներին՝ հանրային սոցիալիստական սեփականության պաշտպանության համար պայքարելու, պետական պարտավորությունները կատարելու, աշխկարգապահությունն ամրացնելու և գյուղատնտեսական աշխատանքների վորակի համար պայքարելու խնդիրներին կատարումը միայն կհանգի կոլտնտեսությունների հետագա բարգավաճմանը, յեկամտարբերության հետագա բարձրացմանը և կոլտնտեսականների գրունության բարելավմանը:

Գյուղի վողջ աշխատանքում անհրաժեշտ է հաստատորեն հիշել, վոր հարկավոր է վճռական պայքար մղել ինչպես նրանց դեմ, ովքեր չեն ցանկանում պայքարել կուլակի դեմ և միջակին «պաշտպանելու», կոլտնտեսականին «պաշտպանելու» արտաքինի տակ գործնականում պաշտպանում են կեղծ կոլտնտեսականներին և կուլակային տարրերին,— այնպես ել նրանց դեմ, ովքեր «ձախ» խոտորումների ձևով դրսևորում են իրենց աջեյությունը: Հարկավոր է վճռականորեն պայքարել նրանց դեմ, ովքեր սանձարձակ վարչարարություն են ցուցա-

բերում, չեն կարողանում բարեկամին տարբերել թշնամուց, չեն ցանկանում սխտեմատիկ, մանրակրկիտ աշխատանք կատարել համոզելու և վերագաստիտարակելու համար այն կոլտնտեսականներին, վորոնք մեր կողմից են և լուկ վատ դեկավարության, նրանց մեջ տարվող վատ աշխատանքի պատճառով է, վոր սխալ ձանապարհի վրա յեն ընկել:

Յես այստեղ մանրամասնորեն կանգ չեմ առնի մենատնտեսների վրա: Նրանց բոլորին չի կարելի խառնել միատեղ: Հարկավոր է շանտեսել այսորվա այն մենատնտեսներին, վորոնք վաղը կոլտնտեսականներ կլինեն, այլ նրանց մեջ ակտիվ քաղաքական աշխատանք կատարել:

Թեև քաղբաժինները քաղբաժին են հանդիսանում ՄՏԿ-ների, կոլտնտեսությունների և խորհրտնտեսությունների համար, բայց իրենց ամենորյա վողջ աշխատանքում նրանք պետք է աշխատանք կատարեն այսոր մենատնտես մնացած աշխատավոր գյուղացիներին կոլտնտեսություն ներգրավելու ուղղությամբ:

Սոցմրցումն ու հարվածայնությունը գյուղում, այդ թվում նաև կուսակցականների և կոմյերիտականների մեջ, առայժմ ծայր աստիճանի թույլ են զարգացած: Յես առիթ եմ ունեցել դիտել մեծ քանակությամբ ստանիցաներ և գյուղեր, վորտեղ միքանի տասնյակ և նույնիսկ մոտ հարյուր կոմունիստներ կան, բայց գործնականում նրանք արտադրության մեջ մեծ դեր չեն խաղում: Որինակ՝ Կուբանի ստանիցաներից մեկում 100 կոմունիստ և 150 կոմյերիտական կա, իսկ նոյեմբեր ամսին տակավին դաշտում մնացել եր հազար հեկտար չհավաքված յեղիպտացորեն, չկալաված ցորեն: Յեթե այդ ստանիցայի կոմունիստները և կոմյերիտականներն իսկական հարվածայիններ լինեյին և հարկ յեղածին պես իրենց հետևից տանելին կոլտնտեսականներին, ապա յեղիպտացորենը հավաքելը մեծ դժվարություն չեր ներկայացնի: Կոլտնտեսականներ կան, այդ թվում նաև կոմունիստներ և կոմյերիտականներ, վորոնք տարեկան 30—40 աշխոր ունեն: Իրանք կեղծ կոլտնտեսականներ են:

Ահա թե ինչու աշխատանքի ճիշտ կազմակերպումը, աշխարհագրապահության բարձրացումը, սոցմրցման ու հարվածայնության գլխավորումն ու զարգացումը, կոլտնտեսությունների և խորհրտնտեսությունների բանվորներին ճիշտ դասավորումն ու ոգտագործումը քաղբաժինների և մեր գյուղական կուսակցական կազմակերպությունների կարևորագույն խնդիրն են հանդիսանում:

Կոլտնտեսականները պահանջները հսկայական չափով աճել են: Պետք է կարողանալ կոլտնտեսականների առաջ պարզել նրանց այսորվա անելիքի կապը վաղվա հեռանկարի, կուսակցության ընդհանուր քաղաքականության հետ: Իրա համար հարկավոր է բարելավել հրատարակվող, գրականությունը: Հարկավոր է բարելավել մամուլի դեկավարությունը: Հարկավոր է, վոր մեր գիտնական պրոպագանդիստները և փորձառու ագիտատորները, վորոնք ապրում են քաղաքներում,

հաճախակի գյուղ գնան, վոր նրանք գյուղական աշխատողներին սովորեցնեն հմուտ ագիտացիա ու պրոպագանդ և ինքները սովորեն հմտորեն ագիտացիա ու պրոպագանդ մղել գյուղի նոր պայմաններում:

Այս բոլոր խնդիրները կատարելու համար անհրաժեշտ է անկուսակցական կոլտնտեսական ակտիվին համախմբել կուսակցության շուրջը: Մենք պետք է ուղղակի ասենք, վոր շատ գյուղերում և ստանիցաներում վերջին ժամանակներս աշխատանքն անկուսակցական ակտիվի հետ ծայր աստիճանի թույլ է և անբավարար: Ակտիվի ժողովները հաճախ բրիգադիներին և կոլտնտեսություններին մյուս վարչական, պաշտոնատար անձանց ձևական ժողովների բնույթ են կրել:

Պրտավսկ ստանիցայի կոլտնտեսականների և մենատնտեսների ժողովում հանդես յեկալ մի կոլտնտեսուհի. «Մեր սիրտը ցավում է կոլտնտեսության համար, մենք կոլտնտեսություն ենք կազմակերպում, մենք պայքարում ենք նրա համար, վորպեսզի ստիպված չլինենք նորից կուլակին ստրուկ դառնալ, իսկ մեզ մոտ կան կուլակային տարրեր, վորոնք կոլտնտեսություն են մտել քայքայելու դիտավորությամբ: Մենք պետք է նրանց վտարենք, պետք է կոլտնտեսության վարչության շուրջը հավաքենք իրոք այնպիսիների, վորոնց սիրտը ցավում է կոլտնտեսության համար»:

Ահա կոլտնտեսությանը նվիրված այգպիսի մարդկանցից և վոչ թե ձևական նշանից յեղնելով պետք է ակտիվ ստեղծել կոլտնտեսություններում, վորը գործնականում պայքարի կոլտնտեսության ամբողջական համար: ԿԿ-ի վորոշման նախագծի մեջ պարզորեն գրված է կոլտնտեսությունում և խորհրտնտեսությունում մեծամասնությունը կոլտնտեսությունում, վորը բանի վերաբերյալ, վոր չպետք է վախենվածելու վերաբերյալ, այն բանի վերաբերյալ, վոր չպետք է վախենալ խախտելու կարծեցյալ «միասնությունը» կոլտնտեսության և խորհրտնտեսության ներսում, չվախենալ պայքար մղելու:

Մի կոլտնտեսությունում՝ Հյուսիսային Կովկասի Կամենակ շրջանի Վերինեպիտովսկի գյուղխորհրդի Լենինի անվան կոլտնտեսությունում՝ յես հանդիպեցի վարչության ժողովին ակտիվի հետ միասին: Նստած է մի կոմունիստ՝ նախկին կարմիր պարտիզան, Վերստուգիլ Հանձնաժողովի նախագահ Կրասնովը: Կոլտնտեսության նախագահը և տնտեսավորը նախկին սպիտակներ են, խորթ մարդիկ, բացահայտորեն վոչ մեր գիծն են տանում: Իսկ կոմունիստ Կրասնովը յեհայտորեն վոչ մեր գիծն են տանում: Իսկ գործնականում բոլորին հրամայում են կուլակային են կանչում, իսկ գործնականում բոլորին հրամայում են կուլակային տարրերը: Առերևույթ միասնություն են ստեղծում կոլտնտեսությունում: Բայց՝ նա ուղղված է պրոլետարական պետության շահերի դեմ, կոլտնտեսականների շահերի դեմ: Ահա հենց այդպիսի միասնության դեմ է ուղղված ԿԿ-ի պլենումի վորոշման այն կետը, վորը վե-

բարերում ե կոլտնտեսություններում մեծամասնությունը նվաճելուն:

Մենք պետք է ստեղծենք անկուսակցական ակտիվ, վորը մեզ հետ միասին պայքարի բոլոր և ամեն տեսակ դեպքերում, մի ակտիվ, վորն իր հետեից տանի հիմնական մասսային: Իսկ վոր մասսան մեզ հետ է, վոր կոլտնտեսությունները կայուն են ավելի քան յերբեկոցեք,— դա անվիճելի յէ:

